

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ

ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
(ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների
դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
ՂԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

պատմական գիտությունների դոկտոր
ՉՈՐԱՆՅԱՆ Պ. Ա.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՂԱՐԻԲՅԱՆ Ի. Գ.

Առաջատար կազմակերպություն՝

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտ - Մատենադարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2012 թ. մարտի 9-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղդասյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. փետրվարի 6-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՒՄԻՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: IX դարը Հայոց պատմության մեջ նշանավորվեց հարյուրամյակներ առաջ կորսված պետականության վերականգնումով: Այդ իրադարձությունը տեղի ունեցավ 885թ.: Հայաստանի քաղաքական անկախության դրոշակակիրները Բագրատունիներն էին, որոնք VIII-IXդդ. մեծապես հզորացել էին և իրենց տիրապետության տակ առել մարդկային, տնտեսական ու տարածքային խոշոր ռեսուրսներ:

Հայ Բագրատունիները, վերածվելով տարածաշրջանի առաջատար քաղաքական ուժի, ինչպես նաև օգտվելով Արաբական խալիֆայության աստիճանական թուլացումից, ստանձնեցին Հայաստանի և այսրկովկասյան երկրների առաջնորդման դերը, այդ երկրներն ուղղորդեցին զարգացման հունով՝ անգնահատելի դեր խաղալով հայ և հարևան ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության մեջ: Արաբական խալիֆայության փլուզման պայմաններում նրանք կարողացան Հայաստանն ու այսրկովկասյան երկրները հեռու պահել զգալի ցնցումներից, իսկ այնուհետև դրանք միավորել մեկ տերության մեջ: Վերջինս, սկզբում ասպարեզ գալով որպես կենտրոնաձիգ պետություն, Մ. սկզբին, պահպանելով և նույնիսկ ընդարձակելով իր սահմանները, մինչև ժամանակ, իր վրա կրեց ավատատիրական մասնատվածության հետևանքները: 908թ. ստեղծվեց Վասպուրականի թագավորությունը, որով ավարտվեց Հայ Բագրատունիների միասնական թագավորության շրջանը: Այդ իրողությունից ելնելով՝ Հայ Բագրատունիների թագավորության պատմությունը (885-1045) բաժանվում է երկու ժամանակաշրջանի՝ միասնական թագավորության կամ տերության (885-908) և ավատատիրական մասնատվածության (908-1045):

IXդ. և Xդ. սկզբին փոփոխությունների ենթարկվեց Հայաստանում և Այսրկովկասում տիրող վարչական և քաղաքական իրավիճակը, որը պատմական աշխարհագրության կարևոր և համակողմանի ուսումնասիրության կարող է բնագավառ է:

Հայ Բագրատունիների տերության պատմաաշխարհագրական ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ինչպես Հայագիտության, այնպես էլ՝ կովկասագիտության և արևելագիտության համար: Այն նաև արժեքավոր է հայ, վրացի և այլ ժողովուրդների քաղաքական պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Հայ Բագրատունիների տերության պատմական աշխարհագրության ուսումնասիրությունն ունի ոչ միայն զուտ գիտական, այլև՝ կարևոր քաղաքական նշանակություն: Թուրք, ադրբեջանցի, ինչպես նաև որոշ վրացի պատմաբաններ, հետապնդելով հեռու գնացող քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել Հայ Բագրատունիների տերության պատմությանը վերաբերող պատմական և պատմաաշխարհագրական մի շարք իրողություններ: Հետևաբար, Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրությանը և վարչական բաժանումներին նվիրված ամեն մի անաչառ ուսումնասիրություն կարևոր ներդրում է մեր հարևան երկրների պատմաբանների կողմից իրականացվող նենգափոխումների և քաղաքական նկրտումների բացահայտման գործում:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության թեման ընտրվել է Հայ Բագրատունիների տերության պատմական աշխարհագրությանը վերաբերող առանցքային հարցերի համակողմանի քննության նպատակով:

Այդ նպատակի իրականացման համար խնդիր ենք դրել.

ա. անդրադառնալ Հայաստանում և այսրկովկասյան երկրներում արաբական տիրապետության վերջին շրջանի պատմությանը և վարչաքաղաքական իրադրությանը՝ դրանով իսկ հստակեցնելով այն պատճառները, որոնք ազդեցություն էին թողել Հայ Բագրատունիների տերության և նրա վարչաքաղաքական բաժանման հանկարգի ձևավորման գործընթացի վրա,

բ. քննության առնել Հայ Բազրատունիների տերության ձևավորման և կայացման պատմությունը,

գ. ուսումնասիրել Հայ Բազրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգը,

դ. կատարել Հայ Բազրատունիների տերության մեջ մտնող երկրների, իշխանությունների և արաբական ամիրայությունների պատմաաշխարհագրական քննությունը՝ հստակեցնելով դրանցից յուրաքանչյուրի սահմանները, տարածքը ու վարչական բաժանումը,

ե. հետազոտել ու ներկայացնել Հայ Բազրատունիների տերության քաղաքները, նշանակալից բնակավայրերը, բերդերը, վանքերն ու եկեղեցիները,

զ. քննության առնել Հայ Բազրատունիների տերություն մտնող և տերությունն արտաքին աշխարհին կապող առևտրական ճանապարհները՝ ճշգրտելով դրանց ուղղությունները և հնարավորության սահմաններում տեղորոշել կայարանները:

Ատենախոսության արդյունքերի նորությունը: Հայ Բազրատունիների տերության պատմաաշխարհագրական խնդիրները մեզանում դեռևս առանձին և համապարփակ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Թեև IX-X դդ. Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրության որոշ հիմնահարցեր քննության են առնվել հայ և օտարագզի ուսումնասիրողների կողմից, բայց այդ տերության ստեղծման, կազմի, սահմանների, վարչաքաղաքական բաժանման համակարգի, քաղաքների, բերդերի, վանքերի, եկեղեցիների և առևտրական ճանապարհների վերաբերյալ ամբողջական պատմաաշխարհագրական ուսումնասիրություն ցայսօր իրապարակի վրա չկա: Կատարված համապատասխան ուսումնասիրություններում Հայ Բազրատունիների տերության կազմի մեջ մտնող երկրների պատմաաշխարհագրական քննությունն իրականացվել է խնդրո առարկա ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակից որոշ չափով կտրված և առանձին՝ այդ երկրները ի սկզբանե չդիտարկելով որպես Հայ Բազրատունիների տերության վարչաքաղաքական համակարգի մաս: Մինչդեռ այդ երկրներում տիրող իրադրությունը և քաղաքական կյանքի զարգացումն անհրաժեշտ էր դիտարկել Հայոց տերության ընդհանուր վարչաքաղաքական իրավիճակի լույսի ներքո, որը հնարավորություն կտար կատարել կարևոր եզրակացություններ:

Սույն ատենախոսությունը Հայ Բազրատունիների տերության ստեղծման, կազմի, սահմանների, վարչաքաղաքական բաժանման համակարգի, քաղաքների, բերդերի, վանքերի, եկեղեցիների և առևտրական ճանապարհների համակողմանի ուսումնասիրության փորձ է:

Շուրջ մեկ հարյուրամյակի առումով կատարվող հետազոտության մեջ Հայ Բազրատունիների տերությունը՝ նրա կազմի մեջ մտնող երկրներով ու իշխանություններով (Հայաստան, Վիրք, Աղվանք, Կղարջքի կուրապաղատություն, Ծանարաց քրեպիսկոպոսություն), դիտարկվում է որպես զարգացող և փոփոխվող օրգանիզմ, որի ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել ժամանակի և տարածության մեջ քաղաքական պատմության և հասարակական զարգացման հիմքի վրա՝ վեր հանելով Հայաստանում և Այսրկովկասում Հայոց տերության ձևավորման և գոյության ընթացքում առկա վարչաքաղաքական իրողություններն ու տեղաշարժերը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքներն օգտագործելի են Հայաստանի և հարևան երկրների պատմությանը և պատմական աշխարհագրությանը վերաբերող հետազա ուսումնասիրություններում:

Կատարված ուսումնասիրությունները, տեղադրություններն ու եզրակացությունները կարող են օգտագործվել նաև Հայ Բազրատունիների տերության շրջանում Հայաստանի և այսրկովկասյան երկրների պատմության, պատմական աշխարհագրության ու ժողովրդագրության խնդիրներին մվիրված բուհական դասընթացներում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են Հայ Բազրատունիների տերության շրջանը՝ Հայոց Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների գահակալման տարիները (885-908թթ.): Անհրաժեշտաբար, հետազոտության ժամանակագրական շրջանակում ընդգրկվել է նաև Հայ Բազրատունիների տերության ձևավորման և կայացման շրջանը, այսինքն՝ IX դարը:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Աշխատանքի ընթացքում կիրառվել են հետազոտության այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են միջկրթաքային համադրման (համաբերման), վերլուծական-համադրական, պատմահամեմատական, հետադարձ վերլուծության և քարտեզագրման մեթոդները:

Ուսումնասիրության նպատակները նախատեսում են պատմական, աշխարհագրական, հնագիտական և այլ տվյալների ու գիտելիքների համադրում: Այդ պատճառով հիմնվել ենք միջկրթաքային համադրման մեթոդի վրա (պատմություն-աշխարհագրություն, պատմություն-հնագիտություն, պատմություն-ճարտարագիտություն և այլն):

Վերլուծական-համադրական մեթոդի կիրառման շնորհիվ իրականացվել է փաստերի վերհանում, հավաքագրում, համակարգում, ընդհանրացում և դրանք ժամանակի և տարածության մեջ տեղադրելով՝ տարբեր երևույթների էության սահմանում: Դա հնարավորություն է տվել ամբողջական վերլուծության ենթարկել Հայ Բազրատունիների տերության տարածքը, դրա աճը, վարչական բաժանումը, տարածքային-ժողովրդագրական հարցերը և այլն:

Պատմահամեմատական մեթոդի և դրա պատմաժագումնաբանական և պատմատիպաբանական ուղղությունների օգտագործման շնորհիվ հնարավոր է դարձել վերականգնել և ներկայացնել նախորդ դարերի հասարակական-աշխարհագրական իրողությունները, ցուցադրել նույն պատմաաշխարհագրական տարածքում բնակվող տարբեր ազգերի զարգացման ընդհանրականության արդյունքում ծնված համանման երևույթների միջև փոխկապակցվածությունը և տարբեր ազգերի շրջանում միաժամանակ ձևավորված երևույթների համադրելիությունը:

Հետադարձ վերլուծության մեթոդի կիրառումը, որը թույլ է տալիս վերականգնել առանձին երևույթները հետադարձ կապի հաստատման միջոցով, ավելի ուշ շրջանի աղբյուրների տեղեկությունների հիման վրա հնարավորություն է տվել ճշգրտելու Հայ Բազրատունիների տերությանը վերաբերող պատմաաշխարհագրական մի շարք կարևոր հարցեր:

Ուսումնասիրությունն ամբողջացվել է փաստերի և հետազոտության քարտեզագրման մեթոդի կիրառմամբ, որի արդյունքում պատրաստվել են Հայ Բազրատունիների տերությունը, նրա կազմի մեջ մտնող տարբեր երկրամասերը, իշխանությունները և ատևական ճանապարհների ներկայացման քարտեզներ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի ճիստում:

Աղբյուրներ և գրականություն: Հայ Բազրատունիների տերության պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար առաջնակարգ նշանակություն ունեն հայկական սկզբնաղբյուրները: Կարևոր նշանակություն ունի Հայ Բազրատունիների տերության ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու¹ աշխատությունը, ինչպես նաև հարուստ տեղեկություններ պարունակող Անանուն Ջրու-

¹ Տե՛ս «Յուվհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Եր., 1996:

ցագրի¹, Թովմա Արծրունու², Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի³, Մովսես Դախուրանցու⁴, Վարդան վարդապետի⁵, Ստեփաննոս Օրբելյանի⁶ և այլոց⁷ երկերը:

Մեր ուսումնասիրության համար արժեքավոր են նաև վրացական աղբյուրները: Կարևոր են «Քարթլիի մատյան»-ը⁸, Ստեփան Տեթբցու «Գործոնի վկայաբանություն»-ը⁹, Դավթի որդի Սմբատի «Պատմություն»-ը¹⁰, Լեոնտի Մրովելու «Վրաց թագապետի մատնություն»-ը¹¹, Վախուշտ Բագրատիոնի «Վրաց թագավորության պատմություն»-ը¹², ինչպես նաև վրացական սրբերի «վարք»-երից «Գրիգոր Խանձթեցու վարքը»¹³, «Սերապիոն Ջարգմեցու վարքը»¹⁴ և «Իլարիոն Վրացու վարքը»¹⁵:

Կարևոր են նաև բյուզանդական աղբյուրները: Մասնավորապես, խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Թեոփանես Խոստովանողի¹⁶, Յովսեփ Գենեսիոսի¹⁷, Լևոն Սարկավազի¹⁸, Կոստանդին Ծիրանածնի¹⁹, Թեոփանեսի Շարունակողի²⁰ և Յովհաննես Սկիլիցեսի²¹ աշխատություններում:

Առենախոսության աղբյուրագիտության հենքում խիստ կարևոր են արաբ հեղինակների աշխատությունները: Հատկապես արժեքավոր են IX-Վերջ. մատենագիրներ

¹ Տես «Պատմություն Անանուն Ջրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Յ. Դարբինյան-Մելիքյանի («История Анонимного Повествователя (Псевдо-Шапух Багратуни)»), Եր., 1971:

² Տես Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն տանն Արծրունեաց, բնագիրը Վ. Վարդանյանի, Եր., 1985:

³ Տես «Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Իրատ. Ստ. Մախասեսանց, Ս. Պետերբուրգ, 1885:

⁴ Տես Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983:

⁵ Տես «Հաւարումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862:

⁶ Տես «Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910:

⁷ Տես «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Իրատ. Կ. Մելիք-Օհանջանյան, Եր., 1961, «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցոյ», աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, «Մատթոսի Ուռնայեցոյ ժամանակագրութիւն», գրաբար բնագիրը Ս. Մելիք-Սեփանյանի և Ն. Տեր-Սիբայեյանի, Երևան, 1991, «Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գոոց պատմագրաց», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Ս. Տեր-Սիբելեանի, Վաղարշապատ, 1893 և այլն:

⁸ Տես «Матиане Картелиса», перевод, введение и примечания Лордкипанидзе М., Тб., 1976.

⁹ Տես Ստեփան Տեթբցի, Գործոնի վկայաբանությունը.-Մելիքսեթ-Քել Լ., «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Ա, Եր., 1934:

¹⁰ Տես Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, пер. Лордкипанидзе М., Тб., 1979.

¹¹ Տես Леонти Мровели, Жизнь картлийских царей, извлечение сведений об абхазах Северного Кавказа и Дагестана, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. Цулая, М., 1979.

¹² Տես Вахушти Багратиони, История царства Грузинского, перевод Н. Накашидзе, Тб., 1976.

¹³ Տես Տես Георгий Мерчуле, Житие Св. Григория Хандзтийского, грузинский текст, введение, издание, перевод Н. Марра, «Тексты и разыскания по армяно-грузинской филологии», т. VII, СПб., 1911, էջ 83-151.

¹⁴ Տես Василий Зарзмили, Житие Серапиона Зарзмели, «Древнегрузинская литература (V-XVIII вв.)», тексты, сост. Л. Менабде, пер. с груз., Тб., 1987.

¹⁵ Տես «Житие и деяния Илариона Грузина», перевод с древнегрузинского, введение, примечания Г. Цулая, М., 1998.

¹⁶ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1983:

¹⁷ Տես Joseph Genesios, On the reigns of the emperors, -Australian Association for Byzantine Studies, 11, 1998.

¹⁸ Տես Лев Диакон, История, М., 1988.

¹⁹ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածնի, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1970:

²⁰ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Ե, Թեոփանեսի Շարունակող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1990:

²¹ Տես «Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Բյուզանդական աղբյուրներ, Գ, Յովհաննես Սկիլիցես, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Եր., 1979:

ալ-Իսթախրի¹, Իբն Զաուկալի², ալ-Մուկադդասի³, Մասուդի⁴, Յակուտ ալ-Զամա-
Զամալի⁵ և Իբն ալ-Ասիրի⁶ և այլոց⁷ երկերը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի Հայաստանի և այսրկովկասյան երկրների
պատմությանն ու պատմաաշխարհագրական հիմնահարցերին անդրադարձել են
բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնցից հատկապես իշխատակելի են են Ա. Չամչ-
յանցը⁸, Ղ. Ինժիճյանը⁹, Մ. Բրոսսեմ¹⁰, Ա. Գրեմը¹¹ Ժ. Լոռանը¹², Լեոն¹³, Զ. Մարկվար-
վարտը¹⁴, Ե. Աղոնցը¹⁵, Զ. Մանանդյանը¹⁶, Բ. Առաքելյանը¹⁷, Զ. Հարությունյանը¹⁸, Զ.
Ութմազյանը¹⁹, Զ. Բարթիկյանը²⁰, Կ. Թունանովը²¹, Վ. Վարդանյանը²², Ա. Տեր-Ղևոնդ-
յանը²³, Գ. Գրիգորյանը²⁴, Կ. Յուզբաշյանը²⁵, Բ. Ուլուբաբյանը²⁶, Ռ. Մաթևոսյանը²⁷, Զ.

¹ Տես՝ al-Istakhri, Kitāb masālik al-mamālik, - BGA, editio III, p. I, Lugd. Bat., 1967.

² Տես՝ Abū `L-Kāsim Ibn Haukal al-Nasībī, Kitāb surāt al-ard, -BGA, editio III, p. II, Lugd. Bat., 1967.

³ Տես՝ al-Moqaddasi, Kitāb aḥsān at-tākasim fi ma`rifat al-akālim, -BGA, editio III, p. III, Lugd. Bat., 1967.

⁴ Տես՝ ١٩٤٨, قهراتقا، ١٠٢، يوحسمة، جورمبهدا، و زباعر رهوجا، ١٠٢، "Kitāb at-tanbih wa'l ischrāf auctore al-Masūdī" - BGA, editio II, p. VIII, Lugd. Bat., 1967.

⁵ Տես՝ Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld, Leipzig, 1924 (in sechs Bänden).

⁶ Տես՝ ١٩٦٧، بيروت، ١٠٩، كتاب الاثير، لهماكلا في التاريخ، ١٠٩، بيروت.

⁷ Տես՝ ١٩٥٦-١٩٥٨، القاهرة، ١٠٣، بلاذري، بكتك جوتف البلدان، ١٩٧٠، بيروت، ٢، توريد. بخيرات الطيري، ١٠٩، "Kitāb al-Boldān auctore Ahmed ibn Abī Jakūb ibn Wādih al-Kātib Al-Jakūbī" -BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967, Ibn Khordādbeh, Kitāb al-masālik wa'l-mamālik. -BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967, Ibn al-Fakih al-Hamadhani, Kitāb al-boldān. -BGA, editio II, p. V, Lugd. Bat., 1967, "Kitāb al-a`lāk an-nafisa auctore Abū-`Alī Ahmad-ibn-Omar ibn Rosteh. -BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967.

⁸ Տես Չամչեանց Ա., Պատմութիւն Հայոց, հ. Բ, եր., 1984:

⁹ Տես Ինժիճյան Ղ., Հնամասութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, հ. Ա-Գ, նույնի՝ Ստորագրութիւն իին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:

¹⁰ Տես Brosset M., Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, 1849, նույնի՝ Revue des antiquités georgiennes, Bullet. Scientif. N3 (V, p. 3, St.-Petersbourg, 1839) և այլն:

¹¹ Տես Грен А., Династия Багратидов в Армении, - "Журнал министерства народного просвещения", часть ССХС, С.-Петербург, 1893, ноябрь, էջ 52-139:

¹² Տես Laurent J., L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en (Nouvel édition revue et mise à jour par M. Canard), Lisbonne, 1980.

¹³ Տես Լեո, Հայոց պատմություն, միջին դարեր, երկերի ժողովածու, հ. Բ, եր., 1967:

¹⁴ Տես Մարկվարտ Յ., Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկվարտ, գերմաներէն թարգմանեց Զ.Ս. Հապոզեան, Վիեննա, 1913:

¹⁵ Տես Աղոնց Ե., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, նույնի՝ երկեր, հ. Ա, եր., 2006:

¹⁶ Տես Մանանդյան Զ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, եր., 1936, նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-ХV в. н. эры), Ер., 1954 և այլն:

¹⁷ Տես Առաքելյան Բ., Քաղաքները և արիեստները Հայաստանում IX-XIII դդ., հ 1, եր., 1958:

¹⁸ Տես Զարությունյան Զ., Հայաստանը IX-XI դարերում, եր., 1959:

¹⁹ Տես Ութմազյան Զ., Սյունիքը IX-X դարերում, եր., 1958:

²⁰ Տես Բարթիկյան Զ., Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, հայերեն հոդվածներ, եր., 2002; հ. Բ, հոդվածներ օտար լեզուներով, եր., 2002:

²¹ Տես Toumanoff C., Studies in Christian Caucasian history, Georgetown University Press, 1963, նույնի՝ Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne (Arménie-Géorgie-Albanie), Rome, 1976, նույնի՝ Armenia and Georgia, The Cambridge Medieval History, vol. IV, 1966, նույնի՝ The Bagratids of Iberia from the Eight to the Eleven Century, -Le Museon, 1961, N 74 և այլն:

²² Տես Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., եր., 1969:

²³ Տես Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, Ер., 1977, նույնի՝ Արաբական ամիրությունները Բագրատունյաց Հայաստանում, եր., 1965, նույնի՝ Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղդուր), -«ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149, նույնի՝ Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-11-րդ դարերում, -ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, թիվ 10, էջ 85-98 և այլն:

²⁴ Տես Գրիգորյան Գ., Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, եր., 1983:

²⁵ Տես Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988:

²⁶ Տես Ուլուբաբյան Բ., Դրվածքներ Հայոց արևելից կողմանց պատմության, եր., 1981, նույնի՝ Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, եր., 1975 և այլն:

²⁷ Տես Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, եր., 1990 և այլն:

Սվազյանը¹, Գ. Սկրտունյանը², ադրբեջանցի պատմաբաններ Ջ. Բունիաթովը³ և Ֆ. Ֆ. Սամեդովան⁴, վրացական պատմաբաններ Ս. Լորդկիպանիձեն, Դ. Մուսխելիշվիլին, Ս. Ջանաշիան, Ա. Բոզվերաձեն և այլք⁵:

Մեր ուսումնասիրության ընթացքում, ինչպես նաև վերջինիս արդյունք հանդիսացող քարտեզները կազմելիս՝ Հայաստանի և այսրկովկասյան երկրների սահմանների, վարչաքաղաքական բաժանման համակարգի, առևտրական ճանապարհների ու դրանց ուղղությունների, բնակավայրերի տեղադրության և պատմաաշխարհագրական այլ հիմնահարցերի առումով մեծապես հիմնվել ենք Ս. Երեմյանի, Բ. Հարությունյանի և այլոց հետազոտությունների արդյունքների վրա, որոնք հեղինակների կողմից ամբողջացվել և ներկայացվել են առանձին քարտեզների տեսքով⁶:

¹ Տե՛ս Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Եր., 2006:

² Տե՛ս Մկրտումյան Դ., Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Ер., 1983.

³ Տե՛ս Бунятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

⁴ Տե՛ս Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986.

⁵ Տե՛ս «Очерки истории Грузии», т. II, Тб., 1988, Чавчавадзе И., Армянские ученые и вопиющие камни, Тифлис, 1902. Джанашиа С., Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского «Архитектура древней Армении», Тб., 1947. Такайшвили Е., Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб., 1952. Беридзе В., Архитектура Тао-Кларджети: Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тб., 1981, Silogava V., Shengelia R., Tao-Klardjeti, Tbilisi, 2006, Мамулия Г., Происхождение классового общества и государства в древней Картли, Тб., 1979 և այլն:

⁶ Տե՛ս Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, քարտեզ, Եր., 1963 (համանուն աշխատությանը կից), Մուսխելի՝ Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ, Եր., 1976 (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Եր., 1976), Մուսխելի՝ Բագրատունիների թագավորությունը 9-11 դարերում, քարտեզ, Եր., 1987, Մուսխելի՝ Հայաստանը IX-XI դարերում, քարտեզ, Եր., 1987 և այլն, Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (Եր., 1984) և վերջինիս կից քարտեզներ, Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, Եր., 2001: Հեղինակի՝ խնդրո առարկա շրջանի մյուս քարտեզները տե՛ս Հայաստանի պատմության ատլասի Ա մասում (Եր., 2005): Տե՛ս նաև Hews R., Armenia: A Historical Atlas, Chicago, University of Chicago Press, 2001 և այլն:

ՌԻՍԻՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու վեց հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 393 էջ:

Ներածությունում խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների և խնդիրների մասին, ներկայացվում ատենախոսության գիտական նորույթը և տրվում օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը կրում է «**ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԸ**» վերնագիրը:

Առաջին ենթագլխում («**Հայաստանի և այսրկովկասյան երկրների վարչաքաղաքական իրավիճակն արաբական տիրապետության ժամանակաշրջանում**») ցույց է տրված, որ արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի և այսրկովկասյան երկրների վարչական բաժանումը զգալի ազդեցություն էր թողել Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական համակարգի ձևավորման վրա:

700թ. արաբները՝ նվաճելով Հայաստանն ու այսրկովկասյան երկրները, կազմավորեցին Արմինիա անունը կրող վարչական միավորը (նստիկանություն)¹: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի մեծ մասն ու այսրկովկասյան երկրները և բաղկացած էր չորս մասից, որոնք կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիաներ: Առաջին Արմինիայի մեջ էին մտնում Սյունիքը, Հայոց Արևելից կողմերի աշխարհները, Աղվանքը և Կուր գետի ստորին հոսանքի ու Դարբանդի միջև տարածվող մերձկասպյան երկրամասերը: Երկրորդ Արմինիան ընդգրկում էր Վիրքը, Կախեթը, Ծանարքը և Դիդոյք երկիրը: Երրորդ Արմինիայի մեջ էին մտնում Այրարատը, Վասպուրականը, Դվինը, Շիրակը, Տայքը և Նախճավան քաղաքը: Չորրորդ Արմինիան ընդգրկում էր Ծոփքի և Բարձր Հայքի մի քանի գավառներ, Կարնո քաղաքը՝ համանուն ամիրայությամբ, Տուրուբերանը, Սասունը, Խլաթը, Արճեշը և Ապահունիք գավառը²:

Երկրորդ ենթագլուխը կրում է «**Հայ Բագրատունիների տերության կազմավորումը**» վերնագիրը: VIIIդ. երկրորդ կեսին, երբ Սամիկոնյանների, Կամսարականների և թուլացած կամ քաղաքական թափուրաբեմից հեռացած այլ ազդեցիկ նախարարական տների կալվածքներին (Տայք, Տարոն, Բագրևանդ, Արշարունիք, Շիրակ և այլն) տիրեց Հայոց իշխան Աշոտ Մսակերը (802-826), Բագրատունիներն առաջնակարգ դիրքի ու հզորության հասան ոչ միայն Հայաստանում, այլ Արմինիա նստիկանությունում: Աշոտ Մսակերի որդի Բագարատի (Հայոց իշխան՝ 826-851թթ.) օրոք Բագրատունիների վերելքը շարունակվեց: Բագարատը խալիֆայից ստացավ Արմինիայի «իշխանաց իշխան»-ի պաշտոնը և շուտով պահանջեց Արմինիայի նստիկանի լիազորությունները³: Ի վերջո, հարաբերությունները սրվեցին Արմինիայի նստիկանի և Բագարատ Բագրատունու միջև, որի պատճառով նստիկանը նրան զերեվարեց⁴:

862թ. խալիֆայությունն Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը հանձնեց Աշոտ Բագրատունուն⁵, որն էլ հիմք դրեց Այսրկովկասում հայկական գերիշխանության հաստատման գործընթացին: Թովմա Արծրունին վկայում է, որ «հաւատացեալ

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ, «ԲԵՅ», 2008, թիվ 1, էջ 157-164:

² Տե՛ս Ibn Khordadbeh, էջ 122, Ibn al-Fakih, էջ 290-291, یردلا، I, էջ 231, Jacut, I, էջ 219-220: Տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2010, էջ 34-88:

³ Տե՛ս یردلا، VI, էջ 288:

⁴ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 186-190: یردلا، VI, էջ 45, یردلا، II, էջ 248, نيا ريدلا، V, 288-289:

⁵ Տե՛ս Մանանդյան Յ., Երկեր, հ. Բ, Եր., 1978, էջ 596-597, 600, Մաթևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 51-52, 80:

եր վերակացութիւն աշխարհիս Յայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Յայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»¹: Իսկ Վարդան վարդապետը հաղորդում է, որ Գևորգ կաթողիկոսի ժամանակ (877-897) «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և Աղուանս, և զԿաւկասայինսն հնազանդեալ, և չէր ինչ պակաս՝ բայց ի թագէ»²: Այսպիսով, Այսրկովկասում Աշոտ Բագրատունու գերիշխանությունը հաստատվել է նախքան նրա՝ Յայոց թագավոր դառնալը:

Երրորդ ենթագլուխը կրում է «**Յայոց տերությունն Աշոտ Ա-ի գահակալության շրջանում**» վերնագիրը: Աշոտ Բագրատունու մեծագործությունները տեսնելով՝ հայ նախարարները հավաքվում ու որոշում են խալիֆայից նրա համար թագ խնդրել: Խալիֆան Արմինիայի ոստիկան Իսա իբն աշ-Շայխի միջոցով Աշոտին թագ ուղարկում³: Սևանի արծանագրության մեջ Աշոտը Յայոց թագավոր է հիշատակվում 874թ.⁴, իսկ Գառնու արծանագրության մեջ 879թ. նրա կին Կատրանհիդեն իրեն կոչում է Յայոց թագուհի⁵: «Քարթլիի մատյանի» մեջ Աշոտ Բագրատունին 881թ. հիշատակված է որպես «Յայոց թագավոր»⁶: Հավանաբար, 869թ. Աշոտը թագավոր է հռչակվել հայ նախարարների կողմից⁷, իսկ 885թ. թագ է ստացել խալիֆայից⁸:

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ՝ Աշոտ Բագրատունին իր գերիշխանությունն Այսրկովկասում վերջնականապես հաստատել է թագավոր դառնալուց հետո: Ըստ նրա՝ Աշոտ Ա թագավորը կուսակալներ է նշանակել իր տերության տարբեր հատվածներում, նվաճել Կովկասյան լեռների ցեղերին և հնազանդեցրել Աբխազաց (եզերաց) թագավորին⁹:

Չորրորդ ենթագլուխը («**Յայոց տերությունը Սմբատ Ա-ի գահակալության շրջանում**») ցույց ենք տվել, որ Սմբատ Ա-ի օրոք (890-914) վերջնականապես ձևավորվում է Հայ Բագրատունիների տերության վարչաքաղաքական բաժանման համակարգը: Ասողիկն ընդհանուր առմամբ այսպես է ներկայացնում Սմբատ Ա-ի թագավորելը. «Սմբատ թագաւորեալ՝ տիրէ բոլոր հայրենեաց իւրոց, Յայոց և Վրաց, ժառանգելով զքաղաքս հակառակորդաց իւրոց»¹⁰: Սմբատն իրեն է ենթարկում նաև Յայաստանում և այսրկովկասյան երկրներում հաստատված արաբներին¹¹: Սմբատ Ա-ի օրոք Յայոց տերության սահմանագիծը Կարնո քաղաքի հյուսիս-արևմուտքից սկսվելով՝ ձգվում էր հյուսիս, հասնում Սև ծովի ափը և տերության կազմում ընդգրկում Կղարջքը, Կովկասյան լեռների լեռնակամերին և, մասնավորապես, Օսնարքը՝ Ալանաց դռնով, որտեղ հայկական կայաքեր էր հաստատվել, Տփղիսի ամիրայությունը, Գուգարքը, Աղվանքը և Ուտիքը¹²: Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, թե Սմբատ Ա-ն «անուանեաց զինքն...Սրմպատ Յայոց և Վրաց թագաւոր և տիեզերակալ, բազում գաւառաց ինքնակալ»¹³:

Ըստ արաբ պատմիչների՝ Սմբատ Ա-ի տերությունը տարածվում էր Պարտավից մինչև Կարնո քաղաք և Միջագետքից ու Ատրպատականից մինչև Տրապիզոն¹⁴:

¹ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 322:

² Վարդան վարդապետ, էջ 91:

³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140:

⁴ Տե՛ս Ռաֆայելյան Վ., Հայկական գրի սկզբնական տեսակները, Եր., 1939, էջ 88:

⁵ Տե՛ս Առաքելյան Բ., Գառնի, Դ. I, Եր., 1951, էջ 84-86:

⁶ Տե՛ս «Matiane Kartlisa», էջ 31:

⁷ Տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 235-236, Մաթևոսյան Ռ., նշվ. աշխ., 96-97:

⁸ Տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 285, Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 29:

⁹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 142:

¹⁰ Տե՛ս Ասողիկ, էջ 161:

¹¹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 144-166:

¹² Անդ:

¹³ Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

¹⁴ Տե՛ս al-Istakhri, էջ 188, Ibn Haukal, էջ 350:

Հայ Բագրատունիների տերությունը Սմբատ Ա-ի օրոք բուն հայկական հողերից բացի ընդգրկում էր Համշենը, Կղարջքի կուրապաղատությունը, Վիրքը, Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան հատվածի ցեղերին, Տփղիսի ամիրայությունը, Ծանարքի քորեպիսկոպոսությունը, Աղվանքը և Աբխազաց թագավորությունը:

Հինգերորդ ենթազույգը կրում է «Աղվանից և Կղարջքի (Վրաց) թագավորությունների ստեղծումը» վերնագիրը: 890-ական թթ. Սմբատ Ա-ի կողմից թագադրվեցին նրա հպատակ Համամ Առանշահիկ և Ատրներսեհ Բագրատունի իշխանները: Այդ իրադարձությունները բխում էին Հայոց տերության հետ կապված քաղաքական զարգացումներից: Ըստ Մովսես Դասխուրանցու՝ Համամն Աղվանից թագավոր է դարձել 894թ.¹: Նա թագադրվել է Սմբատ Ա-ի կողմից: Ատրներսեհ Բագրատունու՝ Վրաց թագավոր դառնալու վերաբերյալ վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ որի՝ Սմբատ Ա-ն «կացուցանե՛ զնա (իմա՛ Ատրներսեհին-Ա.Ե.) թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատե՛»: Վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը տեղեկացնում է, որ «Դավիթ կուրապաղատի որդի Ատրներսեհին դրեցին Վրաց թագավոր» 888թ. տեղի ունեցած դեպքերից հետո²: Ատրներսեհի թագադրության վերաբերյալ նույն տեղեկություններն են հաղորդում նաև վրացական այլ աղբյուրներ: Դատելով Հովհաննես Դրասխանակերտցու ներկայացրած ժամանակագրությունից՝ այդ իրադարձությունը տեղի է ունեցել 899թ.: Սմբատ Ա-ն, զնահատելով նրա հավատարմությունը, նրան թագադրում է և հռչակում «թագաւոր Վրաց», թեև նա Վիրքին դեռ չէր տիրում⁴:

Սմբատ Ա-ի կողմից Աղվանից և Կղարջքի իշխաններին տրված թագերը քաղաքական լուրջ նշանակություն չունեին: Ատրներսեհի համար այդ իրենից ներկայացնում էր միայն Հայոց թագավորության աստիճանակարգում երկրորդ տեղի ամրագրում: Ուստի՝ նա շարունակում է կոչվել կուրապաղատ⁵, իսկ Համամը՝ Արևելից (Աղվանից) մեծ իշխան⁶, քանի որ թագավոր դառնալուց հետո նրանց կարգավիճակը կարգավիճակը Հայոց թագավորության համակարգում չէր փոխվել:

Վեցերորդ ենթազույգում («Հայ Բագրատունիների «տերություն»-ը») ցույց ենք տվել, որ Հայոց տերությունը Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք ուներ տերությանը բնորոշ հատկանիշները: «Տերություն» որակումն նախատեսում է հզորություն ու տիրապետություն և այդ պատճառով օգտագործվում է միայն այն պետությունների վերաբերյալ, որոնք ունեն նշանակալի դերակատարություն, քաղաքական կշիռ, մասշտաբներ, տնտեսական ու ռազմական հզորություն և որոնք ընդունակ են ազդեցություն գործել հարևան ու հեռավոր քաղաքական միջավայրերի վրա⁷:

Ըստ Ն. Աղոնցի՝ «տերություն» բառն արտահայտում է «տիրոջ» հովանավորությունը և գերադասությունը վասալի նկատմամբ: Նա մեզ է բերում «տերություն» բառի բացատրության համար բնորոշելի արտահայտությունը, որն անում է Հազկերտը Տիգրան կանչված հայ նախարարների առաջ. «մեր առ ձեզ տրուփին և խնամարկութիւն, և ձեր առ մեզ արդարամտութեամբ ծառայութիւն և հնազանդութիւն»⁸:

¹ Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 335:

² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 180-188:

³ Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 34:

⁴ Տե՛ս Մարկուարտ Յ., Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 138, Աղոնց Ն., երկեր, հ. Ա, էջ 504:

⁵ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 188:

⁶ Անդ, էջ 174:

⁷ Политология: словарь-справочник /Василик М., Вершинин М. и др/, М., 2001. Гарнов К., Англо-русский политический словарь, М., 2005, Бачинин В., Бачинин А., Политология: Энциклопедический словарь, М., 2005. Политологический словарь: Учеб. пособ. /Григорян Р., Гришин А., Демин Г. и др./, М., 1995.

⁸ Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 110: Տե՛ս Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 523:

Հայաստանում և Այսրկովկասի մեծագույն մասում «տերությունը»-ը պատկանում էր Հայոց թագավորին, որին հպատակ էին մնացյալ իշխանները: Այդ տերությունն արտահայտվում էր տարբեր ձևերով: Օրինակ՝ Կղարջքի կուրապաղատ Ատրնեսեից, թագ ստանալով Սմբատ Ա-ից, հռչակվեց որպես նրա տերության աստիճանակարգում երկրորդ մարդ¹, իսկ Աբխազաց թագավորը՝ պարտվելով Աշոտ Ա-ից՝ այնուհետև «պարտավճար միշտ մնա ի ծառայութիւն բերեր»²: Հայոց թագավորը ուր տեր էր նաև Կախեթի թորեպիսկոպոսի և Աղվանից իշխանի (Արևելից մեծ իշխան) համար: Ատողիկը, օրինակ՝ Հայոց թագավորին հպատակ հայկական և այսրկովկասյան իշխաններին պարզապես որպես նրա ծառաներ է հիշատակում: Ըստ պատմիչի՝ Աշոտ Բ-ն Հայաստանից վտարում է արաբական զորքը, բայց «գտանէ գծառայս հօր իւրոյ (իմա՝ Սմբատ Ա-Ա.Ե.) թագաւորեալ»³:

Մյուս կողմից՝ Հայոց թագավորությունն ուներ նաև տերությանը բնորոշ այն հատկանիշները, որոնք վերաբերում են վերջինիս՝ միջազգային հարաբերություններում ունեցած կշռի և ռազմական հզորությանը: Թե՛ հալիֆայությունը և թե՛ Բյուզանդիան ճանաչել էին Հայոց թագավորությունը՝ ելնելով վերջինիս զգալի դերակատարությունից և կշռից: Սմբատ Ա-ի օգնության վրա էր հենվում խալիֆան, երբ ցանկանում էր պայքարել Ատրպատականի Յուսուֆ ոստիկանի դեմ⁴: Ամիրի Շայբանի ամիրան ընդհանրապես այն մտավախությունն ուներ, որ Հայոց տերությունն այնքան է հզորացել, որ Սմբատ Ա-ն նպատակ է հետապնդում տիրելու նաև Հյուսիսային Միջագետքին⁵: Դա նշանակում է, որ Հայոց թագավորությունը նշանակալից դեր է ազդեցություն ուներ միջազգային հարաբերություններում, որը հիմնված էր նրա տնտեսական և ռազմական հզորության վրա: Այդ իսկ պատճառով Սմբատ Ա-ն կոչվում է «բուրից արևելեայցս գլխավոր»⁶:

Հայկական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ Բագրատունի առաջին տիրակալները հարկ էին վճարում հալիֆայությանը: Թագադրության ժամանակ թագն ու թագադրության հագուստները ուղարկում էր խալիֆան⁷: Թագ էր ուղարկում նաև Բյուզանդիայի կայսրը⁸: Պետք է նշել, որ հալիֆայության քայքայման պայմաններում թագավոր հռչակված իշխանները դառնում էին լիովին անկախ իրենց ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Միակ կապը մնում էր հարկատվական պարտականության կատարումը հալիֆայության առաջ, որ նշանակում էր հալիֆայության գերիշխանության միայն ձևական ընդունում⁹:

Դատելով այն իրողությունից, որ Բագրատունիներն իրենց միանգամայն անկախ էին դրսևորում թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում, պետք է եզրակացնել, որ այդ պարտականությունն ուներ ձևական բնույթ և գրեթե ոչնչով չէր պարտավորեցնում Աշոտ Ա-ին և Սմբատ Ա-ին:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է «**ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՂԱՎԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ**» վերնագիրը:

Առաջին ենթագլխում («Այրատատ») ցույց ենք տվել, որ Աշոտ Սասկերի ժամանակներից սկսած Բագրատունիները կարողացան աստիճանաբար տիրել

¹ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 188:

² Անդ, էջ 142:

³ Տե՛ս Ատողիկ, էջ 169-170:

⁴ Անդ, էջ 206:

⁵ Տե՛ս Անանուն Ձրուցագիր, էջ 171-173:

⁶ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 278: Տե՛ս Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրագրեր (հաս. գիտ.)», 1996, թիվ 2, էջ 27-28:

⁷ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 140-142, 148-150:

⁸ Տե՛ս Անանուն Ձրուցագիր, էջ 159:

⁹ Տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 243:

Այրարատի մեծագույն մասին: Դա կապված էր այն իրողության հետ, որ 774-775թթ. արաբական տիրապետության դեմ Հայոց ապստամբությունից հետո քաղաքական ասպարեզից հեռացան մի շարք խոշոր նախարարական տներ, այդ թվում՝ Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցրեցին նախկին կշիռը: Բագրատունիներին հաջողվեց օգտվել ստեղծված իրավիճակից և տիրել վերոհիշյալ նախարարական տների տիրույթներին:

Բագրատունիների տիրույթների մեջ էին մտնում Կողովիտը, որը ՎՊ. սկսած հիշատակվում է որպես Բագրատունյաց բնիկ տիրույթ¹, Բագրևանդը, որը Աշոտ Բագրատունին IXդ. երկրորդ կեսին միացրեց իր տիրույթներին², Արշարունիքը, որը Կամսարականների մնացորդներից գնեց Աշոտ Սասկերը 774-775թթ. ապստամբությունից հետո՝ սեփական նստավայրը Կողովիտի Դարյունք բերդից տեղափոխելով այնտեղ³, Վանանդը և Շիրակը, որոնք նույնպես Բագրատունիներին էին անցել անցել Կամսարականների թուլացումից հետո⁴, Աշոցքը, որի մի մասը Բագրատունիտունիներին էր անցել Շիրակի հետ միասին⁵, իսկ մնացյալ հատվածը՝ 881թ. տեղի ունեցած հայ-արխազական բախումից որոշ ժամանակ առաջ⁶, ճակատքը, Ծաղկոտնը, որտեղ արաբական ամիրայություն էր ձևավորվել⁷, Բասենը, որը Սմբատ Սմբատ Ա-ն գրավել էր արաբ կայսիկներից⁸, Հավնունիքը, որի մի մասը՝ Ավնիկ բերդով, մաս էր կազմում կայսիկների ամիրայության⁹ և Սմբատ Ա-ի կողմից արքունի քունի տիրույթներին էր կցվել Բասենի հողերի հետ միասին, իսկ մյուս հատվածը՝ այն բանից հետո, երբ Հավնունի իշխանը միացել էր Կղարջքի Ատրներսեհ իշխանի կողմից Սմբատ Ա-ի դեմ ծրագրած դավադրությանը և վերջինիս բացահայտումից հետո հեռացել իր տիրույթներից¹⁰, Արագածոտնը, որին Բագրատունիները տիրել էին Աշոտ Սասկերի օրոք, երբ Ամատունիները հեռացել էին Այրարատից¹¹, Դվինի շրջակա գավառները՝ Ոստան Դվնան (Ոստան Հայոց), Արածը և Ուրծածորը, որն Աշոտ Բագրատունին սեփական տիրույթներին կցեց 878թ. Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդ աշ-Շայբանիի ծրագրած դավադրության բացահայտումից հետո¹², Մայաջոտնը, Նիզը, որը Բագրատունիներին էր անցել այն բանից հետո, երբ նրա տերերը՝ Գնթունիները Հայոց թագավորից ստացել էին Սամշուլե բերդը՝ շրջակայքով¹³, Վարաժժունիքը, որը, ամենայն հավանականությամբ, Բագրատունիներին էր անցել Նիզի հետ միասին, Գաբեղյանքը, որի մի հատվածը պատկանում էր Մամիկոնյաններին¹⁴ ու, հավանաբար, Բագրատունիներին էր անցել Բագրևանդի հետ միասին և Աբեղյանքը:

Երկրորդ ենթազխում («Տարոնի իշխանություն») ցույց ենք տվել, որ արաբական տիրապետության շրջանում Տարոնը և Սատունը կազմում էին Հայոց

¹ Սեբեոս, էջ 103-104:

² Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 87:

³ Տե՛ս Ատոհիկ, էջ 106:

⁴ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 83:

⁵ Ամդ:

⁶ Տե՛ս «Մատիանե Կարտլիսա», էջ 31:

⁷ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 159-161, Ստեփան Տբեթցի,-Սելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

⁸ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

⁹ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 17: Տե՛ս նաև Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

¹⁰ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 208-210:

¹¹ Տե՛ս Ղևոնդ, էջ 166-169:

¹² Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 338-346, Ստեփան Տբեթցի,-Սելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

¹³ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 296:

¹⁴ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 87:

իշխան Բագարատ Բագրատունու մեկ միասնական տիրույթի երկու՝ դաշտային և լեռնային հատվածները¹: Բագարատ Բագրատունու իշխանության մեջ ընդգրկված էին նաև Արզնը (Աղծն) և Բաղեշը², ինչպես նաև Սասունի, Արզն քաղաքի և Մոկքի միջև գտնվող Աղծնիքի լեռնային գավառները՝ Կեթիկը, Տասիկը, Ազնվաց ձորը, Երխեթը և Գեղեխը³: Ըստ Բալազուրու՝ Բագարատի իշխանության մեջ էին մտնում նաև Արշամաշատի կամ Շինշաթի գավառի որոշ հատվածներ⁴, այսինքն՝ Ծոփքի Բալահովիտ, Պարնատուն, Խործյան, Հաշտյանք և Բարձր Հայքի Մամանաղի գավառները, Մուզուր գավառի արևելյան ու եկեղյաց գավառի հարավային և արևելյան հատվածները, ինչպես նաև Տուրուբերանի Բզնունիք գավառը, Արշամունիք գավառի հարավային և Հարք գավառի արևմտյան հատվածները⁵: Բագարատ Բագրատունին այդ տարածքներին տիրում էր երկու իրավունքով՝ Արմինիայի իշխանաց իշխանի և Տարոնի իշխանի: Այն բանից հետո, երբ Տարոնի Բագրատունիներն այլևս Հայոց իշխանի և Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը չէին ստանում, նրանք Տարոնի իշխանի իրավունքով տիրում էին վերոհիշյալ շրջաններին:

Սմբատ Ա-ի 906թ. արքայազական արշավանքի մասնակիցների թվում հիշատակվում են «իշխան Աղծնեց Գրիգոր»-ը և «իշխանն Տարունոյ Գագիկ»-ը⁶: «Աղծնեց»-ը Տարոնի իշխանության մեջ մտնող Աղծնիքի գավառների ընդհանրությունն է, իսկ «Տարունոյ»-ը՝ Տարոնի իշխանության մնացյալ հատվածը: Ըստ Կոստանդին Ծիրանածնի՝ Գրիգոր իշխանը Ապոզանեն անունով եղբայր ուներ, և, որ Տարոնի իշխանությունը բաժանված էր երկու եղբայրների միջև⁷: Կարելի է եզրակացնել Գագիկի և Ապոզանենի նույնությունը: Տարոնացի կոչված Գրիգորը, փաստորեն, Տարոնի իշխանության մեջ մտնող Աղծնիքի հողերի իշխանն է, իսկ Տարոնին տիրում է Գագիկ-Ապոզանենը:

Երրորդ ենթագլխում («Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Տուրուբերանում») ցույց ենք տվել, որ Տուրուբերանի որոշ գավառների մաս էին կազմում Հայ Բագրատունիների տիրույթների: Դրանցից էր Աղորնիքը՝ Հավճիչ բերդով, որը արաբական տիրապետության շրջանում մտնում էր կայսիկների տիրույթների մեջ⁸ և և Բագրատունիների արքունի տիրույթներին էր միացվել Սմբատ Ա-ի կողմից⁹: Արիս-Արիստակես Լաստիվերցիի Հավճիչ ամրոցը հիշատակում է Աղորնում¹⁰ (իմա՝ Աղորնիք), որից էլ բխեցվում է Մարդաղին կամ նրա մի հատվածի նույնականությունը Աղորնիքին: Տուրուբերանի գավառներից Բագրատունիների տիրույթների մեջ էր մտնում նաև Հարքը¹¹, Կորո ձորը (Կորի)¹², Ապահունիքի մեծ մասը¹³, որն արաբական տիրապետության շրջանում պատկանում էր կայսիկներին և Բագրատունիների արքունի տիրույթներին էր միացվել, ամենայն հավանականությամբ, կայսիկների

¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 190:

² Տե՛ս Շլեպչյան Ա., Արաբական Խալիֆաթի վարչական քաղաքականությունը Հայաստանում /7-9դդ./, պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Եր., 1954, էջ 49-52:

³ Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յաւելութեամբ ճախնեաց», հրատ. Ա. Սուրբեան, Վենետիկ, 1881, էջ 30-31, Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը (ուսումնասիրություն), Եր., 1944, էջ 389:

⁴ Տե՛ս ܐܘܪܝܿ, II, էջ 220:

⁵ Տե՛ս Եղիազարյան Ա., Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և Մ.Ա.Կ.Բ.Բ., «ԲԵՀ», 2009, թիվ 1, էջ 74-79: Տե՛ս նաև Գրիգորյան Գ., նշվ. աշխ., էջ 63-64, 88:

⁶ Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 189:

⁷ Տե՛ս Կոստանդին Ծիրանածնի, էջ 6-10:

⁸ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, էջ 216-223:

⁹ Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 159-161:

¹⁰ Տե՛ս Արիստակես Լաստիվերցի, էջ 62, 63 և այլն:

¹¹ Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 159, Կոստանդին Ծիրանածնի, էջ 10-11:

¹² Տե՛ս Կոստանդին Ծիրանածնի, էջ 11:

¹³ Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 159-161:

902թ. ապստամբության հետևանքով¹: Աղիովիտի Արճեշ քաղաքը միացվել էր Բագրատունիների արքունի տիրույթներին IXդ. վերջին², իսկ գավառն ամբողջությամբ՝ 907թ. Ամյուկ բերդի ութմանիկների վերացումից հետո³: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Բագրատունիների արքունի տիրույթներին Ամբաստ Ա-ի օրոք կցվել էին Տուրուբերանի՝ Կանա լճի հյուսիսային ափերին տարածվող Բզունիք գավառը՝ Արծկե և Խլաթ քաղաքներով⁴:

Չորրորդ ենթագլխում («Տայք») ուսումնասիրել ենք Հայ Բագրատունիների տերության կազմում Տայքի կարգավիճակը: 774-775թթ. ապստամբությունից հետո Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների մյուս տիրույթները ժառանգական իրավունքով անցել էին Բագրատունիներին, քանի որ Հայոց իշխան Աշոտ Մսակերի մայրը Մամիկոնյան էր, իսկ Մամիկոնյաններն ապստամբությունից առաջ տիրում էին Տայքին⁵: Վարդան վարդապետը հաղորդում է. «Աշոտ և Շապուհ ...գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱւոցք, և զգաւառն Տայոց»⁶:

Չնայած վրացական պատմագրության մեջ փորձ է կատարվել ցույց տալու, թե իբր Սիդ. Տայքը հանդիսանում էր Կղարջքի Բագրատունիների տիրույթ⁷, սակայն վրացական աղբյուրները՝ նկարագրելով Աշոտ կուրապաղատի որդիների տիրույթները, վերջիններիս կազմում հիշատակում են միայն Գուգարքի արևմտյան գավառները և Սամցխեն⁸:

Տայքը Ամբաստ Ա-ի օրոք հանդիսանում էր այն հիմնական վայրը, որտեղ հաճախ ապստամուն էր Ափշինի կողմից հալածվող Հայոց արքան⁹:

Չովհանձնես Դրախտանակերտցին հաղորդում է, թե Տայքում Կղարջքի Ատր-ներսեհ կուրապաղատը կալվածքներ ուներ¹⁰: Պատմիչը կամ թյուրիմացության մեջ է, կամ էլ նկատի ունի ոչ թե ողջ Տայքը, այլ նրա հյուսիսային Կող գավառը, որին կարճ ժամանակով, թերևս, տիրել էին Կղարջքի Բագրատունիները: Սակայն շուտով Ամբաստ Ա-ն արշավում և նվաճում է այդ շրջանները¹¹:

Վերոհիշյալը ցույց է տալիս, որ Հայ Բագրատունիների տերության շրջանում Տայքն ամբողջությամբ մաս էր կազմում արքունի տիրույթների:

Դինգերորդ ենթագլխում («Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Գուգարքում») ներկայացրել ենք Գուգարքի մի շարք գավառների՝ Հայ Բագրատունիների արքունի տիրույթներին միացվելու գործընթացը: «Քարթլիի մատյան»-ը տեղեկացնում է, որ 881թ. դեպքերից որոշ ժամանակ առաջ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գուառանը տիրել էր Ջավախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին և Արտահանին¹²: Վախուշտ Բագրատինը տեղեկացնում է, որ Գուառանը տիրում էր Ջավախքին, Թռեղքին, Աշոցքին և Հայաստանի որոշ հատվածների¹³: Եթե համեմատենք վրացական երկու աղբյուրների տեղեկությունները, ապա կտեսնենք, որ Արտահանը, Աշոցքը և Տաշիրքը դիտվում են որպես Հայաստանի Բագրատունիների

¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 382:

² Անդ, էջ 380-382, Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 434-438:

⁴ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 159-161, 171-173, Կոստանդին Ծիրանածին, էջ 10-11:

⁵ Տե՛ս Ասողիկ, էջ 106:

⁶ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 83:

⁷ Տե՛ս Лордкипанидзе М., նշվ. աշխ., էջ 310-316:

⁸ Տե՛ս «Матиане Карлисца», էջ 31, Вахушты Баграмуони, էջ 187:

⁹ Տե՛ս Չովհաննես Դրախտանակերտցի, էջ 180-182:

¹⁰ Անդ, էջ 188:

¹¹ Անդ, էջ 210:

¹² Տե՛ս «Матиане Карлисца», էջ 31:

¹³ Տե՛ս Вахушты Баграмуони, էջ 187:

տիրույթներ: Ըստ որում, դատելով «Քարթլիի մատյան»-ի և Վախուշտ Բագրատիոնի տեղեկություններից, այդ հողերը Գուառամը նախկինում ստացել էր Աշոտ Բագրատունուց, քանի որ ամուսնացած էր նրա դստեր հետ¹:

881թ. բախում տեղի ունեցավ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու և Կղարջքի կուրապաղատներից Գուառամի որդի Նասրի միջև, որին օգնության էր եկել աբխազական զորքը²: Աշոտ Բագրատունին հաղթանակի հասավ և իր տիրույթներին կցեց Նասրի հողերը (Ջավախք, Արտահան, Տաշիրք, Աշոցքի հյուսիսային հատված (Գոզգեն)):

Դատելով այն իրողությունից, որ Մանգլեաց փոր գավառի հարավային հատվածում՝ Քվիշափոր գավառի սահմանին գտնվող Սամշուլդեն մտնում էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ³, անկասկած, այդ տիրույթների մաս էին կազմում նաև Գուգարքի կենտրոնական և արևելյան գավառները՝ Կողբոփորը⁴, Չորոփորը (քանի որ Սմբատ Ա-ն տիրում էր Հունարակերտին⁵), Ծոբոփորը, Քվիշափորը, Բողոնփորը, Մանգլեաց փոր գավառի մի մասը և Կանգարքը:

Վեցերորդ եմթագուլխը կրում է «**Հայ Բագրատունիների արքունի տիրույթները Վասպուրականում**» վերնագիրը: Դատելով Անանուն Ջրուցագրի մի հաղորդումից՝ Վասպուրականի Դառնի գավառը, որ թովմա Արծրունու կողմից 905թ. Վասպուրականի բաժանման ժամանակ հիշատակվում է Գագիկ Արծրունու տիրույթների մեջ⁶, 906թ. դրությամբ պատկանում էր Սմբատ Ա-ին: Աբխազաց արշավանքի ավարտից հետո, ինչպես հաղորդում է պատմիչը, տեղյակ լինելով արշավանքին մասնակից Գուրգեն Արծրունու դժգոհությանը՝ Սմբատ Ա-ն ասում է նրան, որ «տամ քեզ ...զգաւառն Գառնոյ (իմա՛ Դառնի-Ա.է.)»⁷: Փաստորեն, Դառնիին Սմբատ Ա-ն տիրել է 905-906թթ. միջև:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Նախճավանը, դատելով Անանուն Ջրուցագրի մի տեղեկությունից, ըստ որի՝ Սմբատ Ա-ն նվաճել է Նախճավանը⁸, մտնում էր արքունի տիրույթների մեջ: 902թ. Սմբատ Ա-ն, ելնելով Մանազկերտի կայսիկների հետ բախման ժամանակ Վասպուրականի Արծրունիների ցույց տված օգնությունից, Նախճավանը հանձնեց նրանց⁹, իսկ քիչ անց՝ դատելով թովմա Արծրունու հիշատակությունից, ետ վերցրեց նրանցից¹⁰: Քանի որ Գողթնը Նախճավանի հետ միասին ներկայացնում էր բնաշխարհագրական մի ամփոփ միջավայր և ռազմավարական առումով նրանից անբաժանելի էր, ապա Նախճավանի մասին խոսելիս պետք է նրա հետ անպայման ի նկատի ունենալ նաև Գողթնը:

Ըստ Անանուն Ջրուցագրի՝ Սմբատ Ա-ն Ապուհեճր անունով արաբին էր հանձնել Բերկրին¹¹: Հավանաբար վերոհիշյալ Ապուհեճրն ութմանիկ էր, իսկ քաղաքը նրան հանձնելը կարելի է ընկալել որպես Սմբատ Ա-ի գերիշխանության ընդունում նրա կողմից: Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին մոտ 907թ. գրավեց Ամյուկ բերդը՝ վերացնելով ութմանիկներին¹²: Առբերանի գավառի հարավային հատվածը՝ Ամյուկ բերդով, Սմբատ Ա-ն գրավեց, իսկ այնուհետև վաճառեց Գագիկին: Կոստանդին

¹ Տես «Матиане Картлиса», էջ 31, Вахушти Багратиони, էջ 187:

² Տես «Матиане Картлиса», էջ 31, Вахушти Багратиони, էջ 187:

³ Տես Հովհաննես Դրախանակերտցի, էջ 296:

⁴ Տես Ստեփան Տրեթքի-Մելիքսեթ-Քել Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 91:

⁵ Տես Հովհաննես Դրախանակերտցի, էջ 164:

⁶ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 388-390:

⁷ Տես Անանուն Ջրուցագիր, էջ 195:

⁸ Անդ, էջ 65:

⁹ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 382, 428:

¹⁰ Անդ, էջ 388-390:

¹¹ Տես Անանուն Ջրուցագիր, էջ 161:

¹² Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 434:

Ծիրանածինը հաղորդում է, որ Բերկրին գրավվել էր Սմբատ Ա-ի կողմից և միայն նրա մահից հետո անցել Մանագլետի ամիրային¹: Այսինքն՝ Առբերանի գավառի հյուսիսային հատվածը՝ Բերկրի քաղաքով, մտնում էր Սմբատ Ա-ի տիրույթների մեջ:

Յոթերորդ ենթագլուխը կրում է «**Յայ Բագրատունիների արքունի տիրույթները Սյունիքում**» վերնագիրը: Սմբատ Ա-ի գահակալության տարիներին տեղի ունեցած դեպքերը, որոնք կապված են Երնջակ ամրոցի հետ, իրոք խոսում են այն բանի օգտին, որ այն վերածվել է Յայ Բագրատունիների արքունի տիրույթի: Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն ի թիվս այլ գավառների, տիրել էր նաև Նախճավան գավառի և Սյունիքի սահմանին գտնվող Երնջակ ամրոցին²:

Երբ Յուսուֆը գերեց Սմբատ Ա-ին, նա Երնջակ ամրոցը գրավելու համար, որտեղ ամրացել էին շատ իշխաններ, պահանջում է, որ Սմբատ Ա-ն հրամայի ամրոցի պաշտպաններին անձնատուր լինել, բայց Յայոց թագավորը հրաժարվում է³: Սրանից բխում է, որ Երնջակի պաշտպանները ճանաչում էին միայն Սմբատ Ա-ի իշխանությունը, որ իր հերթին ցույց է տալիս Երնջակի արքունի կալվածք լինելը:

Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն տիրել էր Արևիք գավառին⁴, որը, գտնվելով Գողթնից հարավ-արևելք՝ Երասխի ափամերձ հատվածում, ռազմավարական կարևոր նշանակություն ուներ Յայոց տերության համար՝ Ատրպատականի ոստիկանությանը հարևան լինելու պատճառով:

Ութերորդ ենթագլուխը կրում է «**Յայ Բագրատունիների արքունի տիրույթները Ուտիքում**» վերնագիրը: Ըստ Յովհաննես Դրասխանակերտցու՝ Սմբատ Ա-ն տիրել էր նաև «զուտի գաւառ մինչև ի քաղաքն Յունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամբոր»⁵: «Մինչև ի Տուս» հաղորդումը ցույց է տալիս, որ արքունի տիրույթներին էր միացվել Ուտիքի հյուսիսային հատվածը՝ Աղստև գետի հովտում գտնվող Աղուժ գավառը, որը տարածվում էր Յայ Բագրատունիների արքունի տիրույթ Գուգարքի արևելյան հատվածի և Սևորդիներին պատկանող և Տավուշ գետի ստորին հոսանքի ավազանում գտնվող Տուչ Կատակ գավառի միջև⁶, ինչպես նաև Յունարակերտը:

Մ. սկզբին Գարդմանի Սահակ Սևադայի իշխանությունից բաժանվում է Փառիսոսը կամ Քուստ-ի-Փառնես գավառը: Սմբատ Ա-ի 906թ. արխագական արշավանքի մասնակիցների թվում Անանուն Ջրուցագիրը հիշատակում է «իշխան Փառիսոյ Յրմանէկ բազում հեծելաւք»⁷: Պատմիչի մեկ այլ վկայությունից հայտնի է, որ Սմբատ Ա-ն գրավել էր Փառիսոսը և, ամենայն հավանականությամբ, կցել արքունի տիրույթներին⁸: Մեր կարծիքով, Յմայակը Սմբատ Ա-ի արքունի այդ տիրույթի կառավարիչն էր: Դուրս է գալիս, որ 906թ. դրությամբ Փառիսոսն այլևս անջատված է Գարդմանի իշխան Սահակ Սևադայի տիրույթներից: Այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ այն բանից հետո, երբ Գեղամա ծովի ողջ շրջակայքը միացվել էր Սմբատ Ա-ի արքունի տիրույթներին:

Ութերորդ ենթագլուխում («**Մոկաց իշխանություն**») ցույց ենք տվել, որ Բագրատունիները տիրում էին Մոկքի գգալի մասին: Ըստ Յ. Մարկվարտի՝ Բագրատունիները Մոկքին տիրել են Աշոտ Մսակերի օրոք⁹: Բուդայի արշավանքի ժամանակ Մոկքը հանդիսանում էր Բագրատունիների տիրույթ: Մոկքի իշխանը Սմբատ

¹ Տես Կոստանդին Ծիրանածին, էջ 10-11:

² Տես Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

³ Տես Ստեփաննոս Օրբելյան, էջ 190-191, Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 238:

⁴ Տես Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

⁵ Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 164:

⁶ Տես Վարդան վարդապետ, էջ 98:

⁷ Տես Անանուն Ջրուցագիր, էջ 189:

⁸ Ամդ, էջ 159-161:

⁹ Տես Մարկվարտ Յ., Յայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 66:

Բագրատունին էր¹: Վասպուրականի 895թ. բաժանման ժամանակ Մուկը, ըստ թովմա Արծրունու՝ անցավ Գագիկ Արծրունուն²: Սակայն արդեն Վասպուրականի 905թ. բաժանման ժամանակ թովմա Արծրունին այն չի հիշատակվում Արծրունյաց իշխանների տիրույթների մեջ³: Անանունը 905թ. բաժանումը ներկայացնելիս նշում է, է, որ Գագիկին անցել է Մուկքի Ջերմածոր գավառը⁴: Կարծում ենք, որ 895թ. բաժանման ժամանակ Գագիկ Արծրունու բաժնում հիշատակվող Մուկք անվան տակ ևս պետք է հասկանալ վերջինիս Ջերմածոր գավառը: Անանունի հաղորդումից երևում է, որ Մուկքի մյուս շրջաններում դեռևս իշխում էին Բագրատունիները, որոնց պատմիչը կոչում է Մուկյաց տերեր: Վերջիններս պայքար սկսեցին Գագիկ Արծրունու դեմ, երբ վերջինս փորձ կատարեց տիրելու նաև Մուկքի մյուս գավառներին⁵:

Ատենախոսության *երրորդ գլխում* («ՅԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՅԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ») մանրամասն քննության ենք առել Վասպուրականի, Սյունյաց, Հայոց Արևելից կողմերի և Համշենի իշխանությունների պատմա-աշխարհագրության հարցերը:

Առաջին ենթագլխում («Վասպուրականի իշխանություն») ենք այն իրողությանը, որ Վասպուրականի Գրիգոր-Դերենիկ Արծրունու մահից (885թ.) հետո նրա որդիները 895թ. միմյանց միջև բաժանեցին հայրենի տիրույթները, որոնք Վասպուրականի գավառներից բացի ընդգրկում էին Կործայքի, Պարսկահայքի և Մուկքի որոշ հատվածներ: Աշոտ Արծրունուն անցան Մեծ Աղբակ գավառը, որտեղ գտնվում էր Արծրունյաց ոստան Հաղամակերտը և Վասպուրականի՝ Մեծ Աղբակ գավառից մինչև Երասխ գետ ընկած գավառները: Գագիկին բաժին հասան Ռշտունիքը՝ շրջակա գավառներով և Մուկքի Ջերմածոր գվառը: Գուրգենը ստացավ Վասպուրականի իշխանության՝ Աղբակից արևելք ընկած հատվածը, շրջակայքի՝ Պարսկահայքի գավառները և Կործայքի հյուսիսային շրջանը⁶:

Աշոտ Արծրունու մահից (905թ.) հետո նրա եղբայրներ Գագիկի և Գուրգենի միջև տեղի ունեցավ տիրույթների նոր բաժանում: Գագիկի բաժնում ընդգրկված էին Վասպուրականի հյուսիսային և արևմտյան, իսկ Գուրգենի բաժնում՝ կենտրոնական և հարավային գավառները⁷:

Երկրորդ ենթագլխում («Անձևացյաց իշխանություն») ցույց ենք տվել, որ Հայ Բագրատունիների տերության շրջանում Անձևացյաց իշխանությունն ընդգրկում էր Անձևացյաց գավառից բացի նաև Բուժունիքն ու Երվանդունիքը, ինչպես նաև որոշ ժամանակով Բուն Մարդաստան կամ Տրպատունիք գավառը:

Երրորդ ենթագլխում («Սյունյաց իշխանություններ») ցույց ենք տվել, որ IXդ. սկզբին արդեն Սյունիքում ստեղծվում են մի քանի իշխանություններ:

Սմբատ Ա-ի օրոք Սյունիքում գոյություն ունեին երեք հիմնական իշխանություններ՝ բուն Սյունյաց, Գեղարքունիքի և Վայոց ձորի⁸: Նրանք առանձին գործառնություններով հիշատակվում են Սմբատ Ա-ի արշավաքննությունների ժամանակ⁹:

Գեղարքունիքի իշխանությունն ընդգրկելու էր Սյունիքի Գեղարքունիք գավառի տարածքը, Վայոց ձորի իշխանությունը՝ Վայոց ձոր և ճահուկ գավառների տարածքը, իսկ բուն Սյունյաց իշխանությունը՝ Սյունիքի հարավային գավառները:

¹ Տե՛ս թովմա Արծրունի և Անանուն, էջ 200:

² Անդ, էջ 360:

³ Անդ, էջ 388-390:

⁴ Անդ, էջ 432:

⁵ Տե՛ս Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 66-67:

⁶ Տե՛ս թովմա Արծրունի և Անանուն, էջ 360:

⁷ Անդ, էջ 388-390:

⁸ Տե՛ս Ութնագյան Հ., նշվ. աշխ., էջ 26-27, ծ. 2:

⁹ Տե՛ս թովմա Արծրունի և Անանուն, էջ 368, Անանուն Ջրուցագիր, էջ 189:

Չորրորդ ենթագլխում («Չայոց Արևելից կողմերի իշխանություններ») ցույց ենք տվել, որ IX դ. երկրորդ քառորդում Չայոց Արևելից կողմերում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով աստիճանաբար կազմավորվեցին և հզորացան Առանշահիկների տոհմի երկու՝ Եսայի Աբու Մուսեի և Սահլ Սմբատյանի իշխանությունները: Եսայի Աբու Մուսեի իշխանության մեջ մտնում էին Արցախի Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական-Ի-Կոտակ, Սյուս Չաբանը, Պազկանք, Մխանք և Ուտիքի Տոխ գավառները¹: Ամենայն հավանականությամբ, Եսայի իշխանին էր պատկանում նաև Սյունիքի Աղահեճք և Ուտիքի Ռոտ-Պայակ (Ռոտ-Պացեան) գավառները²:

Սահլ Սմբատյանին և նրա ժառանգներին էին պատկանում Արցախի Վայկունիք գավառի մի հատվածը՝ Չանդաբերդով, Մեծիրանք գավառը՝ Խաչենի բերդով, Չարճլանք գավառը՝ Չավախաղաց բերդով, Քուստ-Ի-Փառնեն (Փառնիստ), Կողք, Մեծ Կուսանք, Պիանք գավառները, Գեղամա կոչված գավառը³, որ նույնանուն է Սյունիքի Սողք գավառին⁴, ինչպես նաև Ուտիքի հյուսիսային գավառներից Տուչ Կատակի մի մասը և Գարդմանը: Այս վարչաքաղաքական իրավիճակը պահպանվել էր նաև 905-906թթ. դրությամբ: Սահլի ժառանգների տիրույթների մեջ աստիճանաբար ձևավորվում է Գարդմանի իշխանությունը, ընդգրկելով Գարդման և Քուստ-ի-Փառնեն գավառները⁵: Մյուս սկզբին Գարդմանի իշխանությունից բաժանվում է Փառնիստը⁶:

Ուտիքում գոյություն ունեցող Սևորոյաց իշխանությունն ընդգրկում էր Տուչ Կատակ գավառի կենտրոնական և հյուսիսային հատվածները, այսինքն՝ Տավուշ գետի միջին և ստորին հոսանքի ավազանը՝ Տավուշ (Տուս) բերդով:

Պինգեբորդ ենթագլխում («Չամշենի իշխանություն») տարբեր իրողությունների հիման վրա վեր են հանվել միմյուցն այժմ հայագիտության մեջ անհայտ որոշ իրողություններ, որոնք վերաբերում են Չայ Բագրատունիների տերության շրջանին: Այդ ժամանակ Չամշենը միացվել էր Չայոց տերությանը: Այդ իրադարձությունը տեղի է ունեցել Սմբատ Ա-ի օրոք՝ 892 կամ 893թ.⁷: Դրանից հետո Չամշենի իշխանները եղել են Բագրատունյաց տոհմից⁸:

Ատենախոսության **չորրորդ գլխում («ՉԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՅՍՐԿՎԿԱՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»)** քննության ենք առել Չայ Բագրատունիների տերության կազմի մեջ մտնող այսրկովսայան երկրների և իշխանությունների վարչաքաղաքական իրավիճակը:

Առաջին ենթագլխում («Արևելից մեծ իշխանություն (Աղվանից թագավորություն») անդրադարձել ենք Աղվանքում ձևավորված իշխանության պատմաաշխարհագրական խնդիրներին: Համաձայն թովմա Արծրունու մի տեղեկության՝ Բուղա զորավարի կողմից գերեվարված հայ իշխանների թվում էր Աղվանքի Շաքե (Շաքի) քաղաքի տեր Սահլ Սմբատյանը⁹: Չայտնի է, որ Սահլը՝ Բաբելյին ձերբակալելուց ու արաբներին հանձնելուց հետո, խալիֆայից ստացել էր իշխանությունն «ի վերայ Չայոց, Վրաց եւ Աղուանից»¹⁰: Սահլի որդին էր «տերանց տերն Յովհաննես, որ Չայոց, Վրաց եւ Աղուանից եղև տեր»¹¹:

¹ Տես Մովսես Կաղանկատվացի, էջ 327:

² Տես Խալաթեանց Բ., նշվ. աշխ., էջ 78, տես Tabari, VI, էջ 47-48, ۱۳۱۰ تا ۱۳۱۲, էջ 291-292:

³ Տես Մովսես Կաղանկատվացի, էջ 340:

⁴ Տես Աղունց Ն., Բագրատունյաց փառքը, -երկեր, հ. Ա, եր., 2006, էջ 516:

⁵ Տես Մովսես Կաղանկատվացի, էջ 341:

⁶ Տես Անանուն Ձրուցագիր, էջ 159-161:

⁷ Տես Չովհաննես Դրափանակերտցի, էջ 162-166:

⁸ Տես Հարությունյան Բ., Չամշենահայոց պատմությունից, -«Եգեթ», թիվ 2, եր., 2006, էջ 34:

⁹ Տես թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 296-298:

¹⁰ Մովսես Կաղանկատվացի, էջ 330-331:

¹¹ Անդ, էջ 330-331:

894թ. Արևելից մեծ իշխան Համանը թագ ստացավ Սմբատ Ա-ից և հռչակվեց որպես «Աղվանից թագավոր»: Համամին թագավոր է կոչում միայն Մովսես Դասխուրանցին¹, իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ի օրոք նրան անվանում է «մեծ իշխանն արևելից Համամ»²: Պատմիչը ցույց է տալիս նրա կարգավիճակը Հայոց թագավորության համակարգում՝ ի նկատի ունենալով այն, որ Համամի թագավորությունը մաս էր կազմում Հայ Բագրատունիների տերության: «Արևելից» ընդհանրական անունը, փաստորեն, արտահայտում էր Հայոց թագավորության մեջ Աղվանքի աշխարհագրական և ռազմավարական դիրքը:

Համամի «վերականգնած» թագավորությունն «Աղվանից» են անվանում միայն հայկական սկզբնաղբյուրները: Վրացական աղբյուրներն այն Հերեթ գավառի անունից կոչում են Հերեթի թագավորություն, իսկ արաբական աղբյուրները՝ սկզբում Շաքի-Կամբեճանի իշխանություն³, իսկ հետո նաև Շաքիի թագավորություն⁴: Ամենայն հավանականությամբ, Համամի հիմնած թագավորությունը՝ դատելով վերն ասվածից, կոչվելու էր Շաքիի թագավորություն, սակայն հայկական աղբյուրներն ավանդույթի ուժով այն կոչում են «Աղվանից», քանի որ այդտեղ էր գտնվել Աղվանից թագավորությունը: Այն ընդգրկում էր Բուն Աղվանից աշխարհի տարածքը և արևելքից հարևան ճիղքը:

Երկրորդ ենթազվյալում («Ճիղք» (ճողբաց իշխանություն)) անդրադարձել ենք այն իրողությանը, որ Հայոց տերության կազմի մեջ էր մտնում ճիղբերի երկիրը: Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ի արխագական արշավանքի մասնակիցների թվում էր «իշխանն ճողբաց բազում գաւրաւք»⁵: Ճիղքը գտնվում էր էր Փիրառաղաթ գետի վերին հոսանքի ավազանում՝ Աղվանքի հարևանությամբ⁶: Այն պետք է մաս կազմեր Արևելից մեծ իշխանության:

Երրորդ ենթազվյալը կրում է «Ծանարքի (Կախեթի) քորեպիսկոպոսություն» վերնագիրը: VIIIդ. վերջին ստեղծվեց Ծանարքի քորեպիսկոպոսությունը: Տարածքային առումով այն սկզբնապես ընդգրկում էր միայն Ծանարքը՝ Ալանաց դռնով, և հարևան ցեղերին, սակայն երբ հակաարաբական շարժման մեջ ընդգրկվեցին նախապես Տփղիսի ամիրայության մեջ մտնող և Կախեթի հարթավայրային մասում՝ Տփղիսից արևելք բնակվող գարդաբանցիները, այդ գործնաբար կամայեցրեց Կուր գետի՝ Տփղիսից արևելք գտնվող հատվածից մինչև Ալանաց դուռն ընկած տարածքներն ընդգրկող միասնական Ծանարքի կամ Կախեթի քորեպիսկոպոսության կազմավորմանը:

Կախեթի քորեպիսկոպոսությունում 881թ. իշխանության եկավ Փաղևան (881-893): Նա Արևմանելի տոհմից էր՝ Վերջինիս օրոք Այսրկովկասում իրենց տիրապետությունը հաստատում են Հայ Բագրատունիները: Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին նվաճում է Ծանարքը և Ալանաց դուռը:

Դռնա Ն. Աղոնը հանգել էր այն զգրակացության, որ Արևմանելի տոհմը հայկական էր և որ այդ տոհմը Կախեթում իշխանության էր եկել Փաղևան Արևմանելիից սկսած⁸: Լրացնելով անվանի հայագետի տեսակետը՝ նշենք, որ այդ իրադարձությունը տեղի է ունեցել ավելի վաղ, եթե հաշվի առնենք այն, որ 881թ. Կախեթի քորեպիսկոպոս է դարձել մի ումն Գաբուլոց, որը հիշատակվում է որպես Աշոտ

¹ Անդ, էջ 335:

² Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 174:

³ Տես یردلا، I, 240:

⁴ Տես یدوعسم، էջ 204-205, Ibn Haukal, էջ 354:

⁵ Տես Անանուն Ջրուցագիր, էջ 189:

⁶ Տես Հարությունյան Բ., «Լիփնքի տեղադրության հարցի շուրջը», «ԲԵՅ», 1981, թիվ, 1 էջ 123:

⁷ Տես Мкртумян Г., Ծշվ. աշխ., էջ 89-90:

⁸ Տես Աղոն Ն., Երկեր, հ. Ա, եր., 2006, էջ 526-529:

Բագրատունու հորեղբորորդի¹: Գաբուլոց Բագրատունին կարճ է իշխել: Նրան փոխարինել է հավանաբար նրա որդին կամ ազգականը՝ Փաղլան: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ հենց այդ ժամանակ պայքար սկսվեց հայերի և աբխազների միջև Վիրքը նվաճելու համար, որն ավարտվեց հայկական կողմի հաղթանակով²:

Չորրորդ ենթագլխում («Կղարջի կուրապաղատություն») քննության ենք առել Կղարջի կուրապաղատության պատմաաշխարհագրական հարցերը: 774-775թթ. ապստամբությունից հետո տեղի ունեցան երկու կարևոր իրադարձություն՝ Տայքին տիրեց Աշոտ Սասկեր Բագրատունին, իսկ Կղարջում հաստատվեցին ապստամբությանը մասնակցած Բագրատունիները: «Քարթլիի մատյանի» պահպանած մի հաղորդման համաձայն՝ Կղարջում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ատրներսեիը տիրում էր այսպես կոչված Ստորին Տայքին, Ախպիրիին (Արսեաց փոր), Շավշքին, Կղարջին, Նիգալին, Ագարին (Էգր) և Սամցխեին³: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Աշոտ կուրապաղատը (մահ.՝ 826) իշխում էր «Շավշք-Կղարջի վրա»: Այնուհետև, հեղինակը տեղեկացնում է, որ Աշոտի տիրույթներն էին Շավշքը, Կղարջը և Նիգալը⁴: Համադրելով վերոհիշյալ տեղեկությունները՝ համոզվում ենք, որ Ատրներսեիի ոչ բոլոր տիրույթներն են ժառանգական իրավունքով անցել նրա որդի Աշոտին: Նա ժառանգել է միայն Շավշքը, Կղարջը և Նիգալը:

Աշոտ Բագրատունու որդիները տիրել էին Սամցխեին և իրենց տիրույթներին միացրել Ջավախքը, Թռեղքը, Տաշիրքը, Աշոցքը, Արտահանը և Սամցխեն⁵: 881թ. դրությամբ Արտահանը, Աշոցքը, Ջավախքը և Տաշիրքը արդեն կցվել էին Հայ Բագրատունիների տիրույթներին, իսկ Թռեղքին տիրել էր 876թ. այնտեղ հաստատված Լիպարիտ Բաղվաշը⁶: Կղարջը գավառին տիրում էր Աշոտ կուրապաղատի որդի որդի Ատրներսեիը, իսկ Սամցխեի մի հատվածին՝ Բագարատը:

Վարդան վարդապետը հաղորդում է, որ Աշոտ Ա-ն մահից առաջ Կղարջի Ատրներսեի Բագրատունուն հռչակում է «իշխան Վրաց»⁷: Այդ կոչումը նրան Հայոց արքայի կոչմից տրվել է այն ժամանակ, երբ նա տիրում էր միայն Կղարջին և հարևան որոշ շրջանների⁸:

Զնայած Ատրպատականի ամիրա Ափշինի արշավանքների հետևանքով Սմբատ Ա-ի կրած դժվարություններին, Կղարջի Ատրներսեի իշխանը հավատարիմ մնաց նրան, որի համար էլ Սմբատ Ա-ն «կացուցանե՛ գնա թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տրուրեանն գնա հաստատե՛»⁹: Ատրներսեի Բագրատունու իշխանությունը տարածվելու էր Տայքի, Գուգարքի կենտրոնական գավառների, Աբխազաց թագավորության և Սամցխեի միջև՝ ընդգրկելով Կղարջը, Շավշքը, Ագարը և Նիգալը: Կղարջի կուրապաղատության սահմանագիծն արևմուտքում տարածվում էր մինչև Պարխարյան լեռների հյուսիսարևելյան ծայրը, հյուսիսում անցնում Մոսքական լեռների, իսկ հարավում և արևելքում՝ Արսիանի լեռնաշղթայի ջրբաժանով:

Հինգերորդ ենթագլխում («Վիրք») քննության են առնվել խնդրո առարկա շրջանում Վիրքին վերաբերող պատմաաշխարհագրական հարցերը: IXդ. սկզբին Վիրքը գտնվում էր Տփղիսի ամիրայության գերիշխանության ներքո և իրենից ներ-

¹ Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

² Անդ:

³ Անդ, էջ 28-29:

⁴ Տե՛ս Сумбат, сын Давида, էջ 141-142:

⁵ Տե՛ս "Матиане Картлиса", էջ 31:

⁶ Անդ:

⁷ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 91:

⁸ Տե՛ս Մարկուարտ Յ., Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 138, Ադոնց Ն., երկեր, հ. Ա, էջ 504:

⁹ Գովհաննես Դրասխանակերտցի, էջ 180-188:

կայացնում էր սահմանային շրջան¹: 820-ական թթ. Վիրքին տիրելու փորձ են կատարում Ծանարաց քորեպիսկոպոսությունը, Աբխազաց թագավորությունը և Կղարջքի կուրապաղատությունը: Հաղթանակի է հասնում Կղարջքի Աշոտ կուրապաղատը՝ տիրելով մինչև Քսան գետն ընկած հողերին²: Նա էլ շուտով պարտություն կրեց Տփղիսի ամիրայից, նահանջեց, և նրա տիրույթներն ամփոփվեցին Կղարջքով³:

Վիրքին տիրելու հաջորդ փորձը կատարեց Կղարջքի կուրապաղատ Բագարաունը (826-876), բայց էական հաջողություն չունեցավ⁴: IXդ. կեսերին Տփղիսի ամիրա Իսհակի իշխանության տակ էր գտնվում Վիրքի մի զգալի մասը: 850-ական թթ. սկզբին, Բուղայի արշավանքի շրջանում, Տփղիսի ամիրայությունը ջախջախվեց, որի հետևանքով Վիրքում նրա դիրքերը խիստ թուլացան, իսկ սահմանները կրճատվեցին⁵:

Աբխազաց Գիորգի Ա թագավորը (861-868) նվաճեց Վիրքը⁶, սակայն 881թ. պարտություն կրեց Արմինիայի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու զորքից: Դրանից հետո տևական ժամանակով Վիրքը ենթարկվեց Հայ Բագրատունիների գերիշխանությանը, որի պատճառով վրացական աղբյուրում Աշոտ Բագրատունին հիշատակվում է որպես «Հայոց և Վրաց իշխանաց իշխան»⁷:

Վիրքը Կղարջքի կուրապաղատությանը սահմանակցում էր Արսիանի լեռներով, իսկ Աբխազաց թագավորությանը՝ Լիխի լեռնաշղթայով⁸ և Ռաճայի ու Դվալի լեռնաշղթաների հյուսիսային հատվածներով: Այն արևելքում սահմանակցում էին Ծանարաց քորեպիսկոպոսությանը մոտավորապես Արագվ գետով⁹: Խնդրո առարկա շրջանում Վիրքից դուրս էին մնացել Տփղիս քաղաքն ու հարևան շրջանները, որոնք մաս էին կազմում Տփղիսի ամիրայության:

Բացի այդ, Հայ Բագրատունիների տերության կազմում ընդգրկված էին նաև արխագներին, ափշիւներին, սվաններին, Վիրքի հյուսիսային հատվածում և Ալանաց դռան շրջակայքում բնակվող ցեղերը:

Վեցերորդ ենթագլխում («Սամցխեի իշխանություններ») ցույց ենք տվել, որ, թեև մինչև այսօր խնդրո առարկա շրջանում նման իշխանությունների գոյության մասին գիտական գրականության մեջ գրեթե չի խոսվել, սակայն փաստերը ցույց են տալիս, որ IXդ. Սամցխեում սկսում են ձևավորվել առանձին իշխանություններ: IXդ. առաջին կեսին Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո, Բագարատ կուրապաղատի օրոք, փորձ է կատարվում Կղարջքի հոգևոր իշխանությունը տարածել Սամցխեում՝ այնտեղ ուղարկելով մի խումբ հոգևորականների՝ Սերապիոն Ջարգնեցու գլխավորությամբ: Սամցխեի իշխաններից Գեորգի Չորչանեցին նրանց ընդունեց գրկաբաց և գործունեության ազատություն տվեց¹⁰: Գեորգի Չորչանեցու իշխանությանը չէր մտնում Կղարջքի կուրապաղատներից և ոչ մեկի տիրույթների մեջ, այլ անկախ էր, իսկ Գեորգի Չորչանեցու կողմից Կղարջքի հոգևորականներին ընդունելն ուներ զուտ հոգևոր բովանդակություն: Անկախ էր նաև Սամցխեում գտնվող այն իշխանությունը, որտեղից Սերապիոն Ջարգնեցուն պարզապես վտարեցին¹¹:

¹ Տե՛ս یدوهسم, I, էջ 203-204:

² Տե՛ս “Матиане Картелиса”, էջ 29:

³ Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 32:

⁴ Տե՛ս “Матиане Картелиса”, էջ 29:

⁵ Տե՛ս یدوهسم, I, էջ 203-204:

⁶ Տե՛ս “Матиане Картелиса”, էջ 31:

⁷ Տե՛ս Анчабадзе З., նշվ. աշխ., էջ 125:

⁸ Տե՛ս “Матиане Картелиса”, էջ 28:

⁹ Տե՛ս Лордкипанидзе М., նշվ. աշխ., էջ 266:

¹⁰ Տե՛ս Василий Зарзмили, գլ. VI-VII:

¹¹ Աճդ, գլ. V:

Յոթերորդ ենթազյուխը կրում է «**Լիպարիտ Բաղվաշի իշխանություն**» վերնագիրը: 876թ. Արզվեթից, որ գտնվում էր Դվիրիլա գետի և Արզվեթի կամ Լիխի լեռնաշղթայի միջև¹, տեղափոխվել և Գուգարքի Թեոքե գավառին տիրել էր Լիպարիտ Բաղվաշ իշխանը՝ այնտեղ կառուցելով Կլդեկար(ն) ամրոցը: Նա վայելում էր Աշոտ Ա-ի հովանավորությունը, որի ապացույցն է այն, որ նա 1Xդ. 80-ական թվականներին տեղի ունեցած հայ-արքայական բախումներին մասնակցեց Աշոտ Բագրատունու կողմում²:

Ութերորդ ենթազյուխում («**Աբխազաց թագավորություն**») քննության ենք առել Աբխազաց թագավորության հետ կապված պատմաաշխարհագրական որոշ խնդիրներ: Աբխազաց թագավորությունը հայկական գերիշխանությունն ընդունել էր դեռևս Աշոտ Ա-ի օրոք, իսկ 906թ., երբ ներխուժել էր Վիրք, ջախջախվել Սմբատ Ա-ի զորքերից: Տարածվում էր Լիխի լեռնաշղթայից մինչև Սև ծով՝ ընդգրկելով Աբխազքը՝ Բզիբի և Կոդոր գետերի միջև, Աբխազքից հյուսիս գտնվող Ջիքերի կամ աղղների երկիրը, Ափշիլքը՝ Աբխազքից հարավ՝ մինչև Վիշապ (Դռակոն, այժմ՝ Ինգուրի) գետ, Եգերքը կամ Լազիկան, այսինքն՝ Փասիս գետի (Ռիոն) ավազանը: Աբխազաց թագավորության հյուսիսային սահմանագիծն անցնում էր Կովկասյան լեռնաշղթայի արևմտյան հատվածի, իսկ հարավայինը՝ Մոսքական լեռների արևմտյան հատվածի ջրբաժանով:

Ատենախոսության **հինգերորդ զյուխը** կոչվում է «**ՅԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒՅՈՒՆՆԵՐԸ**»:

Առաջին ենթազյուխում («**Դվինի ամիրայություն**») անդրադարձել ենք այն իրողությանը, որ 878թ. Դվինը ենթարկեցվեց Բագրատունիներին: Սմբատ Ա-ի օրոք Դվինում հաստատվել էին Մահմետ և Ումայի եղբայրները: Վերջիններս ապստամբեցին Սմբատ Ա-ի դեմ, սակայն անհաջողության մատնվեցին: Սմբատ Ա-ն գրավեց Դվինը³: Դվինում Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք դեռևս ամիրայություն չէր ստեղծվել, չնայած քաղաքում տեղակայված էր արաբ բնակչություն:

Սմբատ Ա-ի կողմից Դվինի ապստամբության ճնշումը տեղի ունեցավ 893թ. մեծ երկրաշարժից անմիջապես առաջ: Ատրպատականի ամիրա Ափշինը 894թ. ներխուժեց Ղայաստան: Նա գրավեց Նախնավանը և Դվինը⁴: Դրանից հետո Դվինը վերածվեց Ատրպատականի ամիրաների հենարանի ընդդեմ Յայոց թագավորության⁵:

Երկրորդ ենթազյուխում («**Պարտավի ամիրայություն**») ցույց ենք տվել, որ Պարտավում արաբական ցեղեր էին վերաբնակեցվել դեռևս VIIIդ. կեսերին, որից հետո այնտեղ կազմավորվեց արաբական ամիրայություն⁶: Յայոց թագավորության ստեղծումից հետո, ինչպես հաղորդում է Յովհաննես Դրասխանակերտցին, Աշոտ Ա-ն «զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճեր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինակուրս և իլուս զամենեսեան կազմեր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցաներ»⁷: Այս հաղորդման մեջ Ուտի գավառի տակ պետք է հասկանալ Ուտիքը, որը ցույց է տալիս ողջ Ուտիքի՝ Յայոց տերության մեջ մտնելը:

Ըստ Անանուն Զրուցագրի՝ Սմբատ Ա-ն «տիրեաց...գաւան Պարտաւայ»⁸, որից հետո Շայբանի ամիրան մեղադրում էր Սմբատ Ա-ին, որ «բռնութեամբ առեր

¹ Տես Երեմյան Ա., Ղայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 39:

² Տես "Мамуане Кармлуца", էջ 31:

³ Տես Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 162-164:

⁴ Անդ, էջ 170-172:

⁵ Տես Տեր-Ղևոնդյան Ա., Դվին քաղաքի ժամանակագրությունը, էջ 15:

⁶ Տես Մովսես Կաղանկատվացի, էջ 325:

⁷ Տես Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 142:

⁸ Անանուն Զրուցագիր, էջ 159:

զանենայն կողմանս արևմտից մինչև հասար յաւանդ քաղաքաց ի Պարտաւ»¹: Ըստ ալ-Իսթախրու՝ Յայոց թագավորության սահմանները տարածվում էին Սմբատ Ա-ի օրոք Պարտավից մինչև Կարին: Այնուհետև հեղինակն ավելացնում է, որ Պարտավ-Դվին ճանապարհի բոլոր կայարանները գտնվում են Սմբատի թագավորության մեջ²: մեջ²: Նույնը հաստատում է Իբն Յաուկալը³: Այս հաղորդումները հստակորեն ցույց են տալիս, որ Պարտավի ամիրայությունը մաս էր կազմում Յայոց տերության:

Չորրորդ ենթազխում («Կայսիկների ամիրայություն») ցույց ենք տվել, որ արաբ կայսիկների ցեղը հաստատվել էր ութմանիկներին պատկանող Աղիովիտից արևմուտք՝ տիրելով Վանա լճի հյուսիսային ափերին, Ապահունիքի մի զգալի մասին և Յարքին՝ մինչև Տարոն գավառ⁴:

Ըստ Կոստանդին Ծիրանածինի՝ Սմբատ Ա-ն կայսիկներից խլել էր Տուրուբերանի Կորոյ ձոր (Կորի) և Յարք (Խարկա) գավառները⁵: Բացի այդ, Յայոց թագավորը կայսիկների ամիրայությունն ամբողջությամբ կտրել էր Կարնո քաղաքն ու շրջակայքն ընդգրկող Կարինի ամիրայությունից՝ գրավելով Աղորնիքը, իսկ այնուհետև՝ Բասեն գավառն ու Ապահունիքի որոշ հատվածներ⁶: Կայսիկների ընդարձակ ամիրայությունից մնացել էին Սանազկերտ քաղաքից մինչև Եղանց բերդ և Ավնիկ ամրոցից մինչև Յարք ընկած տարածքները:

Աշոտ Ա-ի օրոք, ինչպես նաև Սմբատ Ա-ի թագավորության սկզբնական շրջանում, կայսիկները հավատարիմ էին Յայոց թագավորներին, հարկ էին վճարում և զինվորներ տրամադրում նրանց: 898թ. Թուղխի ճակատամարտում Սմբատ Ա-ի կրած պարտությունից հետո կայսիկները հրաժարվեցին Յայոց արքային հարկ վճարել և զինվորներ տրամադրել: Սմբատ Ա-ն կրկին հպատակեցրեց կայսիկներին⁷:

Չորրորդ ենթազխում («Ութմանիկների ամիրայություն») անդրադարձել ենք այն իրողությանը, որ ութմանիկ կոչվող արաբական ցեղը տիրել էր Աղիովիտ գավառին: 774-775թթ. ապստամբության պարտությունից հետո նրանք կարողացան գրավել նաև Բերկրի քաղաքը: Յետագայում, ութմանիկները՝ օգտվելով այն իրավիճակից, որը ստեղծվել էր Բուղայի կողմից Արծրունիներին պարտության մատնելուց հետո տարածվեցին մինչև Ամյուկ բերդն ու հասան Վարազա լեռ⁸: Ութմանիկները տիրում էին նաև Առբերանի գավառին⁹: Թովմա Արծրունին՝ խոսելով 868թ. գերութունից վերադարձած Աշոտ Արծրունու գործունեության մասին, հաղորդում է, որ նա ազատագրեց Վարազը (պատմիչը նկատի ունի Վարազա լեռան շրջակայքը)¹⁰:

Վասպուրականի իշխան Գագիկ Արծրունին մոտ 907թ. ութմանիկներից խլեց Ամյուկ ամրոցը: Ըստ որում՝ Գագիկը վերացրեց Ամյուկի ութմանիկներին¹¹:

Յինգերորդ ենթազխում («Կարինի ամիրայություն») ցույց ենք տվել, որ Կարինի ամիրայությունը մեծ կարևորություն ուներ Խալիֆայության համար՝ Բյուզանդիայի սահմանին գտնվելու պատճառով:

Յայաստանի քաղաքական անկախության վերականգնման գործընթացի ժամանակ և Աշոտ Ա ու Սմբատ Ա թագավորների օրոք Կարինի ամիրայության մասին

¹ Անդ, էջ 171:

² Տե՛ս al-Istakhri, էջ 188, 194:

³ Տե՛ս Ibn Haukal, էջ 350:

⁴ Տե՛ս Ղևոնդ, էջ 145-147, یداد, II, էջ 463: Տե՛ս նաև Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., 2010, էջ 156-165:

⁵ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 11:

⁶ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 159-161, Ստեփան Տբեթցի, էջ 91:

⁷ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 380-382:

⁸ Անդ, էջ 306, 332-334:

⁹ Անդ, էջ 434:

¹⁰ Անդ, էջ 332:

¹¹ Անդ, էջ 434:

հիշատակություններ չկան: Կարող ենք միայն արձանագրել, որ Հայ Բագրատունիների քաղաքականության արդյունքում Կարինի ամիրայությունը կտրվեց կայսիկների ամիրայությունից և ամփոփվեց Կարին գավառի տարածքում: Այն գտնվում էր Հայոց տերության կազմում¹, սակայն միևնույն ժամանակ արաբների համար կարևոր հենակետ էր Բյուզանդիայի դեմ պայքարում:

Վեցերորդ ենթազխում («Նախնավանի ամիրայություն») անդրադարձել ենք այն իրողությանը, որ պրոբեն VIIIդ. սկզբին արաբները Նախնավանում մեծաքանակ կայսզոր էին պահում²: Հետագայում, դատելով թուրք Արծրունու մի տեղեկությունից՝ Նախնավանի արաբները հիմնադրեցին սեփական ամիրայությունը³:

Անանուն Ջրուցագիրը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն, ի թիվս այլ գավառների, տիրել էր նաև Նախնավանին⁴: Նախնավանի կարևոր ռազմաստրատեգիական դիրքը ստիպում էր Հայոց թագավորին այն վերցնելու հսկողության տակ: Ամենայն հավանականությամբ, Սմբատ Ա-ն վերացրել էր Նախնավանի ամիրայությունը, քանի որ այդ դեպքերից հետո տեղի արաբական ամիրայության մասին հիշատակություններ չեն պահպանվել: 902թ. Սմբատ Ա-ն, ելնելով Մանազկերտի կայսիկների հետ բախման ժամանակ Վասպուրականի Արծրունիների ցույց տված օգնությունից, Նախնավանը հանձնեց նրանց⁵, իսկ քիչ անց՝ դատելով թուրք Արծրունու հիշատակությունից, որ 905թ. Գագիկ և Գուրգեն Արծրունի եղբայրների միջև Վասպուրականի գավառների բաժանման ժամանակ նրանցից և ոչ մեկի բաժնում Նախնավանը հիշատակված չէ, այն ետ վերցրեց նրանցից⁶:

Յոթերորդ ենթազխում («Հերի ամիրայություն») անդրադարձել ենք այն իրողությանը, որ Աշոտ Ա-ն իր իշխանությանն էր ենթարկել Հերի և Սալամասի (Սալմաստ) արաբական ամիրայություններին⁷: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ արաբական գաղութներ էին հաստատվել նաև Ջարևանդում ու Մարանդում⁸, որոնք հետագայում միացվել էին Հերի ամիրայությանը: Վերջինս գրավում էր աստիճանաբար հզորացող Արծրունիների ուշադրությունը, որոնք Հերի ամիրայությունից գրավել էին Ջարևանդ գավառը, Հերի մի մասը, իսկ այնուհետև իրենց տիրույթներն ընդարձակել է մինչև Կապուտան ծովի ափերը⁹:

Հայ Բագրատունիների տերության շրջանում Վասպուրականի արևելյան գավառները՝ միավորված Հերի ամիրայի իշխանության ներքո, ուղղակիորեն ենթարկվում էին Հայոց թագավորին¹⁰:

Ութերորդ ենթազխում («Ծաղկոտնի ամիրայություն») Անանուն Ջրուցագրի այն վկայությունից, որ Սմբատ Ա-ն «գժաղկիտն գաւառն էրետ Տաճկի մի...՝ Ռաճայ անուն»¹¹, բխեցրել ենք, որ Սմբատ Ա-ի կողմից ստեղծվել է նոր ամիրայություն: Ծաղկոտն գավառը, որտեղ, ամենայն հավանականությամբ, թեև ոչ ծանրակշիռ, բայց արաբական տարր էր բնակվում, հանձնվել է արաբ իշխանավորի՝ շրջակա ամիրայությունների դեմ հսկակշիռ ստեղծելու նպատակով: Դատելով պատմիչի տեղեկությունից՝ այդ նորաստեղծ ամիրայությունը զբաղեցնում էր Այրարատի Ծաղկոտն գավառի տարածքը՝ Արածանի գետի ակունքների շրջանում:

¹ Տե՛ս al-Istakhri, էջ 234:

² Տե՛ս Ղևոնդ, էջ 24:

³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 304:

⁴ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 159-161:

⁵ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 382, 428:

⁶ Անդ, էջ 388-390:

⁷ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 10:

⁸ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 290-292:

⁹ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 127, 157:

¹⁰ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 162, Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 163-169:

¹¹ Տե՛ս Անանուն Ջրուցագիր, էջ 161:

Իններորդ ենթագլխում («Տփղիսի ամիրայությունն») անդրադարձել ենք այն իրողությանը, որ VIIIդ. սկզբին արաբները, գրավելով Տփղիսը, այն վերաբնակեցրին իրենց ցեղակիցներով՝ վերածելով մահմեդական քաղաքի¹: Հետագայում Տփղիսում Տփղիսում տեղի արաբները ստեղծեցին իրենց ամիրայությունը²:

Տփղիսի ամիրայությունը մինչև Բուղայի արշավանքը զբաղեցնում էր բավական ընդարձակ տարածք: Հայտնի է, որ արաբական ամիրայություններ էին ստեղծվել նաև Ռուսթավում և Դմանիսում, որոնք մտնում էին Տփղիսի ամիրայության մեջ: Տփղիսի ամիրայության մեջ էին մտնում նաև Տփղիս քաղաքը՝ շրջակայքով, Գարդաբանը, Կուխեթի հարավային մերձկուրյան հատվածը և Պարուար գավառը՝ Տփղիսից մինչև Կուր գետ՝ վերջինի աջափնյակում³: Մասուդու հաղորդումները ցույց են տալիս, որ Բուղայի արշավանքից հետո Տփղիսի ամիրայությունը թուլացավ և ամփոփվեց քաղաքում և շրջակայքում⁴:

Տասներորդ ենթագլխում («Գանձակի ամիրայությունն») խոսել ենք Գանձակի ամիրայության ձևավորման մասին: Ըստ Մովսես Դասխուրյանցու՝ 842թ. Խազարաց Փատգոս խաբանը ներխուժեց Հայոց Արևելից կողմեր, սակայն անհաջողության մատնվեց, որից հետո արշավեց նրա որդին, ավերեց երկիրն ու անցավ գնաց Բաղդատ: Ստանալով խալիֆայի հովանավորությունը՝ նա վերադարձավ և 846թ. Շակաշեն գավառում կառուցեց Գանձակ քաղաքը⁵: Այսպիսով՝ Փատգոսի որդին, որ հաստատվել էր Շակաշեն գավառում, պայքար սկսեց, դատելով նրա ասպատակած գավառներից, թե՛ Եսայի Աբու Մուսեի, թե՛ Սահլ Սմբատյանի ժառանգների և թե՛ Սյունիքի իշխանների դեմ, սակայն պարտություն կրեց⁶: «Շիրվանի և ալ-Բաբի պատմության»՝ 859թ. վերաբերող մի հիշատակության մեջ նշվում է, որ Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդը է (857-862) կառուցել Գանձակ քաղաքը⁷: Ըստ այդ պատմության՝ քաղաքը Գանձակ է կոչվել՝ նրա տեղում գտնված գանձի պատճառով (գանձարան իմաստով)⁸: Կարծում ենք, որ առավել հավանական է երկրորդ հիշատակությունը, քանի որ խիստ կասկածելի է, որ խազարների խաբանի որդին, որը ներխուժել էր Արաբական խալիֆայության տարածքը, խալիֆայից իրավունք ստանար Հայաստանում քաղաք կառուցելու: Ըստ որում խոսքը ոչ թե քաղաքի կառուցման, այլ վերակառուցման մասին է, որից հետո այնտեղ արաբներ են վերաբնակեցվել⁹:

Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո Ուտիքն ամբողջությամբ, ուստի նաև Գանձակի ամիրայությունը, մտնում էր Հայ Բագրատունիների տերության կազմի մեջ¹⁰:

Ատենախոսության **վեցերորդ գլուխի («ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱԳՅՈՒՂԵՐԸ, ԲԵՐՂԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ»)** առաջին ենթագլխում («Հայ Բագրատունիների տերության քաղաքները և քաղաքապոլիտերը») անդրադարձել ենք այն իրողությանը, որ Հայաստանի քաղաքներից խնդրո առարկա շրջանում հայտնի էին ինչպես հնուց ի վեր գոյություն ունեցող որոշ քաղաքներ, այնպես էլ նոր առաջացած բազմաթիվ քաղաքներ ու

¹ Տե՛ս "Матиане Картлиса", էջ 28:

² Տե՛ս Богверадзе А., Раннефеодальные Грузинские государства в VI-VIII вв., "Очерки истории Грузии", Тб., 1988, էջ 179:

³ Տե՛ս Мкртымян Г., նշվ. աշխ., էջ 72:

⁴ Տե՛ս Կ. Գ. Գալստյան, էջ 203-204:

⁵ Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 331:

⁶ Անդ, էջ 331-332:

⁷ Տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 46:

⁸ Անդ, էջ 46-47:

⁹ Տե՛ս Աղոնց Ն., Երկեր, հ. Ա, էջ 445:

¹⁰ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 142:

քաղաքային բնակավայրեր: Ատենախոսության մեջ անդրադարձել ենք շուրջ չորս տասնյակ քաղաքների և նշանակալից քաղաքային բնակավայրերի:

Հայաստանի, ինչպես նաև ողջ Հայ Բազրատունիների տերության մեծագույն քաղաքը Դվինն էր, որը հիշատակվում է որպես մայրաքաղաք¹: Աշոտ Ա-ն որպես մայրաքաղաք ընտրեց Բագարանը², իսկ Սմբատ Ա-ն՝ Երազգավորսը³, որոնք խնդրո խնդրո առարկա շրջանում հանդես էին գալիս որպես քաղաքագյուղեր⁴: Հայաստանի նշանավոր քաղաքներից ու քաղաքագյուղերից էին նաև Վաղարշապատը, Կողբը, Քասաղը, Անին ու Կարսը՝ Այրարատում, Կարնո քաղաքը և Արծնը՝ Բարձր Հայքում, Պարտավը, Գանձակը, Շամբորը և Բայլականը՝ Հայոց Արևելից կողմերում, Վանը, Ոստանը, Բերկրին, Հաղամակերտը, Արտամետը և Նախճավանը՝ Վասպուրականում, Սանազկերտը, Արճեշը, Արծկեն, Խլաթը և Մուշը՝ Տուրուբերանում, Իշխանը, Բանակը և Փանասկերտը՝ Տայքում, Մուկը՝ Մուկքում, Կապանը՝ Սյունիքում, Հերը և Սալամասը՝ Պարսկահայքում: Աղվանքի քաղաքներից ու նշանակալից բնակավայրերից հայտնի էին Շաքեն, Խոռնաբուջը, Կապաղակը, Գավազը, Գրվզավը, Գիշը, Արեշը, Խորանթան, Տկետբան, Գուլգուլան և Վժանը, Վիրքում՝ Տփղիսն ու Ռուսթավը, Կղարջքի կուրապաղատությունում՝ Արտանուջը, Սամցխեում՝ Ջանավին և Ծանարքի քորեպիսկոպոսությունում՝ Թելավն ու Բողոջին:

Հայ Բազրատունիների տերության ժամանակաշրջանը կարելի է բնորոշել որպես քաղաքների առաջացման սկզբնական շրջան: Հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում քաղաքների ձևավորման գործընթացը դադարել էր, իսկ գոյություն ունեցող քաղաքները հետընթաց էին ապրել: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո սկսվում է քաղաքագյուղերի, իսկ այնուհետև՝ մեծ քաղաքների ձևավորման գործընթացը: Այդ իսկ պատճառով խնդրո առարկա շրջանում գերակշռում են քաղաքագյուղերը:

Երկրորդ ենթազխում («Հայ Բազրատունիների տերության բերդերը և ամրությունները») քննության առնելով Հայոց տերության բերդերի և ամրությունների տեղաբաշխվածությունը և խնդրո առարկա շրջանում նրանց խաղացած դերը՝ հնարավոր ենք համարել դրանք պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջինը սահմանային ամրություններն էին, որոնք իրենցից ներկայացնում էին որոշակի պաշտպանական համակարգեր: Այդպիսիք էին Աբխազաց թագավորության սահմանին և դրա շրջակայքում գտնվող ամրությունները, որոնցից էին Բաբ Ֆիրուզ Կուբադ (Ֆիրուզ Կուբադի դուռ), Բաբ Սամսախի (Սամցխեի դուռ), Ջվարիսցխե, Լոնսիանթա, Ուլիսցխե, Սուրան, Կվել և Թնոզվ (Թմբկաբերդ) բերդերը, հյուսիսային սահմանային ամրությունները՝ Ալանաց դռնով, Տայքի բերդերը (Երախանի, Թուխարք, Կամախ (Կաղամախ, Կալմախ) և Տայոց քար), Վասպուրականի իշխանության բերդերը (Ջլմար, Սրինգ, Ագարակ, ճահուկ, Ջռել, Ալի, Հողց, Կանգավար, Սևան, Նկան, Ամյուկ, Բերկրի, Երիկավ), Սյունիքի բերդերը (Երնջակ, Շաղատ, Բաղաբերդ, Կապան, Որոտն) և Հայոց Արևելից կողմերի բերդերը (Քթիշ, Գոռոզ, Խաչեն, Շիկաքար, Հավախաղաց, Գարդման):

Ամրությունների հաջորդ խումբը կազմում էին տերության ներքին շրջաններում գտնվող բերդերն ու ամրությունները, որոնցից հայտնի էին Կարսի (Կարուց), Անիի, Արտագերս, Կապույտ, Վաղարշակերտի, Դարյունք, Արծափք, Հունարակերտ, Եղանց, Նախճավանի, Համշեն, Արտաշեն, Սամշուլդե, Սակուրեթ, Գարդաբան, Բոճորմա, Ուջարմա, Վեժին (Վժան), Օրչոբ և բազմաթիվ այլ բերդեր ու ամրություններ:

¹ Անդ, էջ 162, al-Istakhri, էջ 188

² Տես Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 146:

³ Անդ, էջ 186, 200, 211:

⁴ Անդ, էջ 130, 146, 186, 196 և այլն:

Երրորդ ենթազխում («Հայ Բագրատունիների տերության վանքերն ու եկեղեցիները») անդրադարձել ենք այն իրողությանը, որ Հայ Բագրատունիների տերության ստեղծումով նրա կազմում գտնվող երկրներում սկսում են զարգանալ հնուց գոյություն ունեցող եկեղեցիներն ու վանքերը և մինևույն ժամանակ կառուցվում են բազմաթիվ նորերը:

Հայաստանում հայտնի էին Դվինի մայր եկեղեցին, Վաղարշապատի Աբ. Գրիգոր եկեղեցին, որտեղ՝ Դվինի 893թ. երկրաշարժից հետո, հաստատվեց հայոց կաթողիկոսը¹, Երազգավորսի Աբ. Փրկիչ եկեղեցին, որը կառուցվել է Հովհաննես Դրասխանակերտցի (898-929) կաթողիկոսի գահակալման առաջին տարում² և որտեղ Հայոց թագավոր է օժվել Սմբատ Ա-ն³, Բագարանի եկեղեցին, Տաթևի վանքի մայր տաճարը, որի կառուցումն ավարտվել է 905թ.⁴, 871-874թթ. Սևանա կղզում կառուցված Աբ. Աստվածածին և Աբ. Առաքելոց վանքերը, Վանա ձորի վանքը, որը որոշ ժամանակ հանդիսացել է Հայոց Գևորգ կաթողիկոսի (877-897) աթոռանիստ, Վարազա Աբ. Խաչ վանքը, Մշո Աբ. Փրկիչ եկեղեցին, Բանակ վանքը, որը հիմնադրվել է VIIդ. և վերակառուցվել Կղարջքի թագավոր Ատրներսեսի օրոք՝ Սմբատ Ա-ի կողմից նրան թագադրելուց (899թ.) անմիջապես հետո⁵, Իշխանի վանքը, որը կառուցվել է հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցու (641-661) կողմից, Ամարասի վանքը, Մեծիրանից Աբ. Հակոբի վանքը, Գոչա վանքը և Պարտավի Աբ. Գրիգոր եկեղեցին:

Սովանքում հայտնի էր Գիշի և Դավիթ Գարեջա վանքերը, Վիրքում՝ Սցխեթայի Ջվարի վանքը, Տփղիսի Աբ. Մարիամ Աստվածածին և Աբ. Սիոն եկեղեցին, Մանգլիսի Աբ. Խաչ վանքը և Ատենի (Աբ. Սիոն) եկեղեցին:

Կղարջքի Աշոտ կուրապաղատի իշխանության շրջանից (VIIIդ. վերջ-826թ.) սկսած լայն ծավալներ է ընդունում եկեղեցաշինությունը Կղարջքի կուրապաղատությունում, որի սկզբնավորողն այնուհետև Կղարջքի կուրապաղատության հոգևոր առաջնորդի դերը ստանձնած Գրիգոր Խանձթեցին էր (759-861): Նրա կողմից Կղարջքի կուրապաղատությունում կառուցվել կամ վերակառուցվել են տասնյակ եկեղեցիներ, այդ թվում՝ Կղարջքի հոգևոր կենտրոն դարձած Խանձթա վանքը, Օպիզայի Աբ. Հովհաննես Մկրտիչի, Շատրեբդի և Միջմածորի վանքերը:

Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո Կղարջքի հոգևորականները սկսում են իրենց հոգևոր իշխանությունը տարածել հարևան Սամցխեում: Այնտեղ հատուկ այդ նպատակով ուղարկվում է Սերապիոն Ջարգմեցին: Նրա կողմից Սամցխեում կառուցված գլխավոր վանքը Ջարգմայի վանքն էր⁶: Հայտնի էին նաև Դվելի, Ջանավի և Ածղուրի վանքերը:

Ծանարքի քրեպիսկոպոսությունում հայտնի էին Ալավերդիի (Աբ. Գեորգիի) վանքը և Գարդաբանի եկեղեցին:

Ատենախոտության **յոթերորդ զխում («ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՎԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ»)** քննության են առնվել Հայ Բագրատունիների տերության ներսում գործող և տերությունն արտաքին պշխարհին կապող առևտրական գլխավոր ճանապարհները, ճշգրտվել են այդ ճանապարհների ուղեգծերը և կատարել կայարանների տեղադրություններ:

IXդ. երկրորդ կեսից Հայաստանը Մերձավոր Արևելքում կատարվող միջազգային առևտրի մեջ սկսում է կարևոր դեր խաղալ: Միմյանց դեմ անընդհատ պատերազմող Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև Հայաստանը

¹ Անդ:

² Անդ, էջ 186:

³ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 92:

⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, էջ 226:

⁵ Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 33:

⁶ Տե՛ս Василий Зарзмили, қл. VIII-XIII:

գբաղեցնում էր չէզոք դիրք՝ միջազգային առևտրի համար դառնալով կարևոր տարանցիկ երկիր¹: Միջազգային առևտրի կարևոր ճանապարհներից մի քանիսն անցնում էին Հայ Բագրատունիների տերության միջով, որը նպաստում էր տերության քաղաքների զարգացմանը:

Առաջին ենթազխում («Դվին-Պարտավ ճանապարհը») քննության ենթ առել Հայ Բագրատունիների տերության երկու մեծագույն քաղաքները միմյանց կապող առևտրական ճանապարհը: Այն անցնում էր Սիսաջան, Քիլ-Քույ կամ Քիլաքունի, Դաունիս (Դավմիս), Մատրիս և Կալկաթուս կայարաններով²:

Սիսաջան կայարանն իր անունը ստացել էր համապատասխան երկրամասի՝ Սիսականի (Սյունիք) անվանումից³ և գտնվում էր Շարուրի դաշտում, Վայոց ձորի սահմանի մոտ, ներկայիս Նորաշեն գյուղի մերձակայքում⁴: Քիլ-Քույը, որը Կալկաթուրիսի պահպանել է Քիլաքունի ձևով⁵, պետք է սրբագրել Գեղաքունի-Գեղարքունի⁶: Տեղադրվում է Արգիճի գետի գետաբերանի աջ ափին գտնվող Կոթ գյուղաքաղաքի տեղում⁷: Դավմիսը Զավթիսի աղավաղումն է, որը համապատասխանում է հայկական Սոդք անվանը (գրաբարում՝ Սաւղք, սեռ. Սաւղից)⁸: Մատրիսը Հատրիսի աղավաղումն է, որը նույնանուն է Հաթերք (սեռ. Հաթերից) տեղանվանը⁹: Ըստ երևույթին, այն համապատասխանում է հինավուրց Հաթերք գյուղին: Կալկաթուսը, հավանաբար, համապատասխանում է Կաղանկատույքին, որը գտնվում էր Ուտիքի Ուտի Առանձնակ գավառում՝ վերջինիս և Արցախի միջև սահմանին մոտ՝ Տրտու գետի ափին¹⁰:

Երկրորդ ենթազխում («Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը») ցույց է տրված, որ Սմբատ Ա-ն իր թագավորության առաջին տարիներին կնքված հայ-բյուզանդական առևտրական պայմանագրի շնորհիվ ակտիվացան հայ-բյուզանդական առևտրական հարաբերությունները: Սկսեց գործել Դվինից Տրապիզոնով Բյուզանդական կայսրությունը ընթացող ճանապարհը: Դվին-Կոստանդնուպոլիս ճանապարհը Հայաստանում ուներ երկու ուղեգիծ: Առաջին ուղեգիծը գլխավորն էր, որի վրա զարգանում էին մի քանի քաղաքներ՝ Անի, Կարսը, Արծնը և այլն: Ծանապարհի երկրորդ ուղեգիծը Դվինից մինչև Բասեն ընթանում էր Բագավանով: Ծանապարհի այդ հատվածը համապատասխանում էր Հայոց հինավուրց Արքունի պողոտայի կամ Արտաշատ-Տիգրանակերտ մայրուղու Արտաշատ-Բագավան գծամասին¹¹:

Այս ճանապարհը հիշատակվում է «Մղոնաչափք»-ում՝ հետևյալ կայարաններով. Դվին-Կարին (հետագայում ընթանում էր Արծն քաղաքով)-հայ-բյուզանդական սահմանային շրջան-Կողոմնիա-Նեոկեսարիա-Ամասիա-Կոստանդնուպոլիս¹²:

Երրորդ ենթազխումը կրում է «Դվին-Սեբաստուպոլիս (Սուխում) ճանապարհը» վերնագիրը: Այս ճանապարհը Դվինից շարժվում էր Աշտարակով և Ապարանով, Գանլիջա գյուղով, որտեղ գտնվում է Մարմաշենի վանքը, հետո Փարվանա լճից դեպի հարավ-արևմուտք ընթանալով՝ հասնում էր Ախալքալաքից հարավ գտնվող Խոսպիա բնակավայրին: Այնուհետև ճանապարհը Ախալքալաքից դեպի հարավ

¹ Տե՛ս Манандян Я., О торговле и городах Армении..., էջ 203:

² Տե՛ս al-Istakhri, էջ 193, al-Moqaddasi, էջ 381-382:

³ Տե՛ս Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 194-195:

⁴ Տե՛ս Այվազյան Ա., Նախնականի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978, էջ 63:

⁵ Տե՛ս al-Moqaddasi, էջ 382:

⁶ Տե՛ս Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 196:

⁷ Անդ, էջ 197, քարտեզ:

⁸ Անդ, էջ 196-199:

⁹ Տե՛ս Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 199-200:

¹⁰ Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 132-133, 137:

¹¹ Տե՛ս Ղևոնդ, էջ 140, Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 85-114:

¹² Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. 2, էջ 182-183:

հատում էր Կուր գետը և շարժվում Աբասթունան: Այստեղից ճանապարհը անցնում էր հյուսիս և ներկայիս Իմերեթական ուղիով շարժվում դեպի Փուլթ, որտեղից էլ՝ Սև ծովի ափով դեպի Սեբաստուպոլիս¹:

Դվին-Սեբաստուպոլիս ճանապարհը Հայ Բագրատունիների տերությունը կապում էր Աբխազաց թագավորության և Հյուսիսային Կովկասի հետ:

Չորրորդ ենթագլխում («Դվին-Տփղիս-Հյուսիսային Կովկաս ճանապարհը») ցույց է տրված, որ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո Ալանաց դժնով անցնող ճանապարհը վերստին առևտրական կարևոր նշանակություն ձեռք բերեց, որի հետևանքով կարևորություն ստացավ նաև Դվին-Տփղիս ճանապարհը: «Սղոնաչափք»-ի Դվին-Տփղիս ճանապարհը, համեմատելով Սասանյանների տիրապետության շրջանում (համաձայն Պեվտինգերյան քարտեզի) նույն ուղղությամբ գործող ճանապարհի հետ, Երասխ գետի ափամերձ շրջանով, Հրազդան գետի արևելյան ափով, Սևանի լեռնանցքով, Աղստևի ձախ ափով դուրս էր գալիս Կուր գետի ափը², որտեղ միանում էր Պարտավ-Տփղիս ճանապարհին Հունա-Հունարակերտ կայարանում, որը, հավանաբար, գտնվել է Աղստև գետի ձախ ափին, և համապատասխանում է նրա գետաբերանի շրջանում գտնվող ավերակների³: Հունարակերտից ճանապարհը Տփղիս էր շարժվում Պարտավ-Տփղիս ճանապարհի երթուղով՝ Կալա իբն Քանդաման (Գարդաբանում) կայարանով: Գանապարհը Տփղիսից ընթանում էր դեպի Ալանաց դուռ, որտեղից էլ անցնում էր Հյուսիսային Կովկաս:

Հինգերորդ ենթագլխում («Դվին-Բաղեշ-Միջագետք-Ասորիք ճանապարհը») ցույց է տրված, որ այդ ճանապարհը նույնական էր Հայոց Արքունի պողոտային: Այն Արտաշատից դեպի Բագավան էր շարժվում Փառախոտ, Ցոլակերտ և Արուճ բնակավայրերով⁴, Բագավանից հետո անցնում Արծնի գյուղով, այնուհետև՝ ընթանում Ապահունիքով, Հարքով ու Տարոնով: Տարոնից պողոտան, անցնելով Չորա պահակ լեռնանցքով և Բաղեշով, շարժվում էր Տիգրանակերտ: Այս մայրուղին, ըստ «Սղոնաչափք»-ի՝ Հայաստանը կապում էր Դամասկոսի, Երուսաղեմի և Մերձավոր Արևելքի մյուս կարևոր առևտրական կենտրոնների հետ⁵:

Վեցերորդ ենթագլուխը կոչվում է «Դվին-Մարանդ ճանապարհը»: Դվինից Մարանդ ճանապարհի կայարանների տեղադրությունները հայտնի են, իսկ ինչ վերաբերում է երթուղուն, ապա այն Դվինից Նախճավան էր շարժվում Երասխի հովտով: Գանապարհը Մարանդի կողմից Երասխի հովիտ էր հասնում Մարանդ-Ջուլֆա ուղեգծով:

Այս ճանապարհը Հայոց տերությունը կապում էր մի կողմից Ատրպատականի Գանձակի, մյուս կողմից՝ Թավրիզի հետ: Այդ քաղաքներից ճանապարհները տանում էին Պարսկաստան, Պարսից ծոցի առափնյա երկրներ, Խորասան ու Միջին Ասիա⁶:

Յոթերորդ ենթագլխում («Վարդանակերտ (Վարսան)-Պարտավ ճանապարհը») ցույց է տրված, որ Խորասանից Ատրպատականով եկող ճանապարհը հիշատակվում է նաև «Սղոնաչափք»-ում՝ Նախճավան-Արտավեստ-Վարդանակերտ-Պարտավ-Կասպից ծովի ափեր երթուղով⁷:

¹ Տես Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 117-135:

² Տես Еремян С., Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana, «Вестник древней истории», М., 1939, N 1, էջ 81-85:

³ Տես Ջալալեանց Ս., Գանապարհորդությունը ի մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 388:

⁴ Տես Մանանդյան Հ., Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 22-25: Տես նաև Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

⁵ Տես «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 381:

⁶ Տես Մանանդյան Հ., Երկրի, հ. 2, էջ 182-183:

⁷ Տես «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, էջ 381:

ճանապարհի ուղեգծի վրա հիշատակվող Դարման կայարանը, ամենայն հավանականությամբ, գտնվում էր Երասխ գետի աջ ափին, Բայլականը տեղադրվում է ներկայումս Օրեն կալա կոչվող ավերակների տեղում, իսկ Յունանը, թերևս, գտնվել է նախկին Աղղամ քաղաքի մոտակայքում¹ :

Ութերորդ ենթագլխում («Պարտավ-Տփղիս ճանապարհը») քննության է առնվել Հայ Բագրատունիների տերության երկու կարևոր քաղաքները՝ Պարտավն ու Տփղիսը միմյանց կապող մայրուղին, որն անցնում էր Գանձակ, Շամքոր, Խունան և Կալա իբն Քանդաման կայարաններով² : Ամենայն հավանականությամբ, Խունանը նույնական է Հունարակերտին: Կալա իբն Քանդաման (Իբն Քանդաման բերդ) անվանումը, հավանորեն, կապված է Գարդաբան անվան հետ: Բերդը պետք է գտնվեր Կուր և Խրամ գետերի ջրկիցի մոտ, Դըզ-Կալա ամրոցի ավերակների տեղում³ :

Իններորդ ենթագլուխը կոչվում է «Պարտավ-Դարբանդ ճանապարհը»: Այն Պարտավից անցնում էր Բարզանջ (արաբական այլ աղբյուրներում՝ Բարդիջ), որից այն կողմ հատում Կուր գետն ու մուտք գործում Շիրվանշահերի թագավորություն՝ անցնելով Շամախի, Շապորան և Աբխազ կայարաններով ու Սամուր գետի կամրջով⁴ : Բարզանջը գտնվում էր Պարտավից հարավ⁵ Կուր և Երասխ գետերի միջև, անմիջապես մոտ այդ երկու գետերի ջրկիցին⁶ : Այդտեղ կար մի բնակավայրի ավերակ⁷, որտեղ, ամենայն հավանականությամբ, գտնվել է Բարզանջ քաղաքը, իսկ իսկ քաղաքում կամ մերձակայքում՝ կայարանը:

Տասերորդ ենթագլխում («Հեր-Դարբանդ ճանապարհը») ցույց է տրված, որ հարավից Հերով Հայոց տերություն մտնող ճանապարհը դեպի Հարավային Դաղստան էր ընթանում Կալա Յունիս, Կալա ալ-Ասաբիատ, Թաբլա և Շաքի կայարաններով: Կալա Յունիսը, հավանաբար, նույնական էր Դարյունից (Դարիւնից կամ Դարեւնից) բերդին, իսկ Կալա ալ-Ասաբիատը՝ Արծափ ամրոցին⁸ : Ճանապարհը, հավանորեն, Արծափից Տփղիս էր շարժվում Դլիհով և Հունարակերտով: Հավանական է Թաբլայի նույնացումը Թելավին⁹ : Այնտեղից ճանապարհը Հարավային Դաղստան էր անցնում Շաքեով:

Տասնեկերորդ ենթագլխում («Հարավային մայրուղին») անդրադարձել է կատարվել Հայ Բագրատունիների տերության հարավային քաղաքներով անցնող առևտրական մայրուղուն: Այն զալիս էր Իրանից, հասնում Հեր և Ճյուղ տալով դեպի Սալամաս և Որմի (Ուրմիո)՝ ընթանում էր դեպի Վան, Բերկրի, Արճեշ, որտեղից Արծկեով, Խլաթով, Բաղեշով, Արզնով շարժվում դեպի Ամիդ¹⁰ : Այս ճանապարհը հիշատակում է նաև ալ-Իսբախիհն¹¹ :

Տասներկուերորդ ենթագլխում («Հայ Բագրատունիների տերության առևտրական կապերի հիմնական ուղղությունները») ի մի է բերում Հայ Բագրատունիների տերության առևտրական ճանապարհների քննության հիմնական արդյունքները: Հայաստանից և այսրկովկասյան երկրներից դեպի հյուսիս և դեպի արևմուտք ընթացող առևտրական ճանապարհների գործունեության վերականգ-

¹ Տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, էջ 91-96:

² Տե՛ս al-Istakhri, էջ 193:

³ Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. 2, եր., 1985, էջ 175:

⁴ Տե՛ս al-Istakhri, էջ 192:

⁵ Տե՛ս Jacut, IV, էջ 259:

⁶ Անդ, I, էջ 556, يدوعسه, էջ 205-206, Ibn Rosteh, էջ 89, يدوخلاد, I, էջ 240:

⁷ Տե՛ս Չալալեանց Ա., նշվ. աշխ., էջ 364:

⁸ Տե՛ս Եղիազարյան Ա., Հեր (Խուսայր)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասիի, «ՊԲՀ», 2005, թիվ 3, էջ 151-152:

⁹ Տե՛ս Karayloz H., նշվ. աշխ., թիվ 38, էջ 22, ժամոթ. 7:

¹⁰ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 235:

¹¹ Տե՛ս al-Istakhri, էջ 194:

նումից հետո IX-Xդդ. Հայ Բագրատունիների տերությունը առևտրական հարաբերություններ ուներ ինչպես կենտրոնական Ռուսաստանի, այնպես էլ մերձբալթյան երկրների և եվրոպական պետությունների, օրինակ՝ Ֆինլանդիայի, Շվեդիայի, Լեհաստանի, Գոտլանդ կղզու, Դանիայի և Գերմանիայի հետ:

Առևտուրը եվրոպայի հետ ընթանում էր հիմնականում երեք ուղղություններով: Առաջին ուղղությունը տանում էր Վոլգա գետի ավազանը, այնտեղից շարժվում դեպի մերձբալթյան ու Սկանդինավյան երկրներ: Վոլգա գետի ավազանից այն թեքվում էր նաև դեպի արևմուտք՝ մուտք գործելով ռուսական և եվրոպական շուկաներ: Երկրորդ ուղղությունը գալով Իրանից՝ Դերբենդով մուտք էր գործում հյուսիսային Կովկաս, Վոլգայի ավազանով անցնում դեպի Դոն գետի ավազան, այնտեղից՝ մերձդնեպրյան շրջան և շարժվում հյուսիս: Երրորդ ուղղությունն Իրանի հարավային շրջաններից գալով՝ Հայաստանի վրայով շարժվում էր դեպի Փոքր Ասիա, որտեղից մի ուղղությամբ ընթանում էր դեպի Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից՝ եվրոպա, իսկ երկրորդ ուղղությամբ՝ Նա ծովով հասնում էր Դնեպրի ավազանն ու միանում վերոհիշյալ երկու ուղղություններին:

եզրակացության մեջ հանրագումարի են բերված աշխատանքի արդյունքները.

ա. Բագրատունիների հզորացումը սկսվել էր 774-775թթ. ապստամբությունից հետո, որին նրանք հիմնականում չէին մասնակցել: Իսկ նրանց այն ներկայացուցիչները, որոնք մասնակցել էին ապստամբությանը, վերջինիս պարտությունից հետո հեռացել էին իրենց տիրույթներից ու հաստատվել Գուգարքի Կղարջք գավառում՝ հիմնելով Բագրատունիների ավագ ճյուղից կախյալ սեփական իշխանությունը:

բ. Հայոց իշխան Աշոտ Մսակերը (802-826) օգտվեց խալիֆայության թուլացումից ու սկսեց ինքնուրույն իշխել Հայաստանում՝ տիրելով քաղաքական քստերաբեմից հեռացած Կամսարականների և թուլացած Մամիկոնյանների, ինչպես նաև այլ նախարարական տների տիրույթներին՝ դառնալով Հայաստանի և, ընդհանրապես, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի խոշորագույն հողատերը:

գ. Շուտով Հայոց իշխան Բագարատ Բագրատունին (826-851) խալիֆայից ստացավ Արմինիա վարչական միավորի իշխանաց իշխանի պաշտոնը և սկսեց հավակնել նույնիսկ Արմինիայի ոստիկանի լիազորություններին:

դ. Բագարատ Բագրատունու իշխանության շրջանից սկսած Հայ Բագրատունիները, որոնք վերածվել էին տարածաշրջանի առաջատար քաղաքական ուժի, ստանձնեցին Հայաստանի և այսրկովկասյան երկրների առաջնորդման դերը:

ե. Չնայած Բագարատի գերեվարությանը, նրա սկսած գործը շարունակեց Աշոտ Բագրատունին, որը կարողացավ խալիֆայությունից ստանալ ինչպես Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը, այնպես էլ կարճ ժամանակ անց՝ Արմինիայի ոստիկանի լիազորությունները:

զ. Աշոտին իշխանաց իշխան նշանակելն ու ոստիկանի լիազորություններով օժտելը ցույց է տալիս, որ Արմինիայում սեփական իշխանությունը պահպանելու համար արաբներն իրենց հույսը կապում էին Բագրատունիների հետ:

է. Բագրատունիների տիրույթներն IXդ. կեսերին ընդգրկում էին Այրարատը, Տայքը, Մոկքը, ինչպես նաև Տուրուբերանի ու Գուգարքի մի շարք գավառներ:

ը. Ստեղծված իրավիճակը խելամտորեն օգտագործեց Աշոտ Բագրատունին: Նա, 881թ. պարտության մատնելով Աբխազաց թագավորի և Կղարջքի Բագրատունիներից Գուռառամի միացյալ զորքին, Այսրկովկասում ամրապնդեց իր տիրապետությունը: Աբխազաց թագավորությունը ենթարկվեց Աշոտ Ա-ի գերիշխանությանը:

թ. Աշոտ Բագրատունու մեծագործություններին ականատես լինելով՝ Հայոց մեծամեծերը հավաքվում ու դիմում են խալիֆային՝ նրան թագավոր կարգելու խնդրանքով: Խալիֆան Աշոտ Ա-ին թագ է ուղարկում 885թ.:

ժ. Ընդգրկելով Հայաստանից բացի նաև Այսրկովկասի երկրները, ինչպես նաև ձեռք բերելով զգալի ազդեցություն միջազգային հարաբերություններում, Հայոց

թագավորությունը հանդես է գալիս որպես տերության: Այդ իսկ պատճառով Հայոց թագավորը հիշատակվում է որպես «բոլոր արևելցիների գլխավոր»:

ժա. Աշոտ Ա-ի տերությունը Հայաստանի մեծ մասից բացի ընդգրկում էր նաև Կղարջքի կուրապաղատությունը, Վիրքը, Ծանարքի քորեպիսկոպոսությունը, Կովկասյան լեռների արևմտյան հատվածի ցեղերի տարածքները և Աղվանքը:

ժբ. Թագավոր դառնալուց հետո Աշոտ Ա-ն ամրապնդեց իր տիրապետությունն Այրկովկասում և իրականացրեց անհրաժեշտ վարչական փոփոխություններ: Նա Գուգարքի մեծ մասը և Ուտիքի հյուսիսային հատվածը վերածեց արքունի տիրույթների:

ժգ. 888թ. Աշոտ Ա-ի դեմ հանդես եկավ Աբխազաց թագավորությունը, սակայն պարտություն կրեց և կրկին ընդունեց Հայոց արքայի գերշխանությունը:

ժդ. Սմբատ Ա-ն էլ ավելի ընդարձակեց Հայոց տերության սահմանները՝ գրավելով Հանշենը և դուրս գալով Պոնտական ծովի ափը:

ժե. Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք Հայոց տերությունը տարածվում էր Կովկասյան լեռներից մինչև Կորդվաց լեռների հարավային լեռնաբազուկներն ու Մեծ Ջաբ գետի միջին հոսանքի ավազանը և Արածանի գետի ստորին հոսանքից մինչև Կուր ու Երասխ գետերի ջրկիցը:

ժզ. Հայ Բագրատունիների տերության շրջանում Հայ Բագրատունիների արքունի տիրույթների մեջ էին մտնում Այրարատը, Տայքը, Գուգարքի մեծ մասը, Մոկքը, Հանշենը, ինչպես նաև Տուրուբերանի, Վասպուրականի, Սյունիքի և Ուտիքի մի շարք գավառներ:

ժկ. Հայաստանում աստիճանաբար հզորանում էր Վասպուրականի իշխանությունը, որն ընդգրկում էր Վասպուրականի մեծագույն մասը, ինչպես նաև որոշ գավառներ Կորճայքից և Պարսկահայքից:

ժլ. Հայոց Արևելից կողմերում ստեղծվել էին երկու իշխանություն՝ Քթիչի և Խաչենի, որոնք զբաղեցնում էին Արցախ և Ուտիք աշխարհների ամբողջ տարածքը: Սմբատ Ա-ի օրոք որպես առանձին իշխանություն հանդես է գալիս Փառիսոսը:

ժմ. Սյունիքում ստեղծվել էին երեք իշխանություններ՝ Սյունյաց, Վայոց ձորի և Գեղարքունիքի:

ի. Տարոնի իշխանությունը, որը ընդգրկում էր Տուրուբերան աշխարհի գավառների մեծ մասը, ինչպես նաև Ծովքի և Բարձր Հայքի արևելյան ու կենտրոնական գավառները, բաժանված էր երկու իշխանությունների, որոնք ընդգրկում էին համապատասխանաբար Տարոնի իշխանության հարավային և հյուսիսային հատվածները:

իա. Վիրքում, որը մաս էր կազմում Հայ Բագրատունիների տերության, իշխանները գործում էին միմյանցից առանձին՝ ենթարկվելով Հայոց թագավորին:

իբ. Կղարջքում ստեղծվել էր Բագրատունիների կրտսեր ճյուղի իշխանությունը, որն ընդգրկում էր միայն Կղարջքը և հարևան որոշ շրջաններ: Կղարջքի իշխան Ատրենբսեհը 899թ. թագ ստացավ Սմբատ Ա-ից և հռչակվեց Հայոց տերության մեջ «երկրորդ» մարդ և «Վրաց թագավոր», թեև Վիրքին դեռ չէր տիրում:

իգ. Չնայած պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած այն տեսակետին, թե իբր Տայքը մտնում էր Կղարջքի Բագրատունիների տիրույթների մեջ, Տայքն ամբողջությամբ մաս էր կազմում Հայ Բագրատունիների արքունի տիրույթների և Կղարջքի կուրապաղատության հետ որևէ առնչություն չունեցրել:

իդ. Ծանարքում և Կախեթում առաջացել էր Կախեթի քորեպիսկոպոսությունը, որի կազմի մեջ էր մտնում նաև Գարդաբանը: Այստեղ իշխում էր հայկական Արևմանելի տոհմը:

իե. Աղվանքում իշխում էր Աշոտ Ա-ի նշանակած Արևելից մեծ իշխանը, որը 894թ. թագ ստացավ Սմբատ Ա-ից և հռչակվեց որպես Աղվանից թագավոր՝ մնալով հպատակ Հայոց թագավորին:

իզ. 906թ. Հայ Բագրատունիների տերության դեմ հանդես եկավ Աբխազաց թագավորությունը, սակայն պարտություն կրեց, գերվեց և միայն վերստին ճանաչելով Սմբատ Ա-ի գերիշխանությունը՝ ազատ արձակվեց:

իե. Հայ Բագրատունիների տերության կազմում գոյություն ունեին մի քանի արաբական ամիրայություններ, որոնցից առավել նշանակալից էին կասիկների, Դվինի, Պարտավի և Տփղիսի ամիրայությունները: Խնդրո առարկա շրջանում վերացվեցին Խլաթի և Արճեշի ամիրայությունները:

իը. Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, բացի Հայաստանն ու այսրկովկասյան երկրները Խալիֆայության տարբեր երկրամասերին կապող առևտրական ճանապարհներից, սկսում են գործել նաև Հայաստանից դեպի Բյուզանդիա և դեպի Յուսիսային Կովկաս ընթացող ճանապարհները: Ըստ որում՝ Արաբական Խալիֆայության և Բյուզանդիայի միջև ընթացող պատերազմների պայմաններում Հայոց թագավորությունը վերածվում է Արևելքի և Արևմուտքի միջև հիմնական միջնորդի:

իթ. Հայոց տերությունով անցնող միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհների աշխուժացման արդյունքում ծաղկում ապրեցին բազմաթիվ հին քաղաքներ, շատ բնակավայրեր աճեցին ու վերածվեցին քաղաքների:

լ. Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանը կարելի է բնորոշել որպես քաղաքների առաջացման սկզբնական շրջան: Հայտնի է, որ արաբական տիրապետության շրջանում քաղաքների ձևավորման գործընթացը դադարել էր, իսկ գոյություն ունեցող քաղաքները հետընթաց էին ապրել: Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո ավանները և մեծ բնակավայրերը վերածվում են քաղաքագյուղերի, և սկսվում է մեծ քաղաքների ձևավորման գործընթացը: Այդ իսկ պատճառով խնդրո առարկա շրջանում գերակշռում են քաղաքագյուղերը:

լա. Հայ Բագրատունիների տերությունը սահմանակցում էր վտանգավոր հարևանների հետ, որի պատճառով կարևորվում էին սահմանային ամրությունները: Մասնավորապես կարևոր նշանակություն ունեին Ալանաց դուռն ու հարակից ամրությունները, Աբխազաց թագավորության սահմանին և դրա հարևանությամբ գտնվող բերդերը, ինչպես նաև Տայքի, Վասպուրականի, Հայոց Արևելից կողմերի, Սյունիքի և Արևելից մեծ իշխանության տարածքում գտնվող ամրությունները: Ամրությունների հաջորդ խումբը կազմում էին Հայ Բագրատունիների տերության ներքին շրջաններում գտնվող բերդերը:

լբ. ԻՋդ. և Մդ. սկզբին ծաղկում է ապրում նաև եկեղեցաշինությունը: Հնուց ի վեր գոյություն ունեցող վանքերի և եկեղեցիների զարգացմանը զուգահեռ ստեղծվում են բազմաթիվ նոր վանքեր և եկեղեցիներ: Եկեղեցաշինությունը հատկապես մեծ ծավալներ էր ընդունել Հայ Բագրատունիների արքունի տիրույթներում, Վասպուրականում, Սյունիքում, Հայոց Արևելից կողմանց իշխանություններում, Կղարջքի կուրապաղատությունում ու Սամցխեում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՅԵՂԻՆԱԿԻ ՅՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

մեծագրություններ

1. Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, 192 էջ:

2. Հայ Բագրատունիների տերությունը (885-908), (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., ԵՊՀ հրատ., 2011, 394 էջ:

գիտական հոդվածներ

1. Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը: - «Գիտության գլոբուս», Երևանի համալսարանի հրատ., 2004, հ. 4, էջ 99-106:

2. Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը: - «Լրաբեր (հաս. գիտ.)», ՀՀ ԳԱԱ հրատ., 2005, թիվ 2, էջ 218-226:

3. Արաբների արշավանքը Ատրպատականի վրայով դեպի Հայաստան: - ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Երևանի համալսարանի հրատ., 2005, էջ 88-98:

4. Արմինիա ոստիկանության սահմանները: - «ՊԲՀ», ՀՀ ԳԱԱ հրատ., 2005, թիվ 1, էջ 243-258:

5. Հեր (Խուռայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասու: - «ՊԲՀ», ՀՀ ԳԱԱ հրատ., 2005, թիվ 3, էջ 149-159:

6. Աբու ալ-Հասան Ալի իբն ալ-Հուսայն իբն Ալի ալ-Մասուդի, Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր («Մուրուջ ազ-զահաբ վա մասդին ալ-ջավահիր»), Ցուցումների և դիտարկումների գիրք («Քիթաբ ատ-տանբիհ վալ-իշրաֆ»), (հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների մասին), արաբերեն բնագրերից թարգմանությունը, Մասուդիի կենսագրությունը և ծանոթագրությունները Ա.Ս. Եղիազարյանի, Եր., հեղինակային հրատ., 2007, 43 էջ:

7. Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում: - «ՊԲՀ», ՀՀ ԳԱԱ հրատ., 2008, թիվ 3, էջ 197-208:

8. Հաբիբ իբն Մասլամայի և Սալման իբն Ռաբիայի արշավանքները Հայաստան և այսրկովկասյան երկրներ: - «Լրաբեր (հաս. գիտ.)», ՀՀ ԳԱԱ հրատ., 2008, թիվ 2, էջ 68-77:

9. Վասպուրականի իշխանութեան տարածքը և վարչաքաղաքական բաժանումը Թ. դարի վերջին և Ժ. դարի սկզբին: - «Բազմավեպ», Վենետիկ, Ս. Ղազար, 2008, էջ 101-116:

10. Արաբների կողմից Հայաստանի նվաճման թվականի շուրջ: - «ԲԵՀ», ԵՊՀ հրատ., 2008, թիվ 1, էջ 157-164:

11. Հայոց եկեղեցին և քաղկեդոնականությունը VII դարում: - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 289-297:

12. Հայ Բագրատունիների տերության քաղաքական կարգավիճակին վերաբերող մի կարևոր հարցի շուրջ: - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 391-400:

13. Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և Մ. սկզբին: - «ԲԵՀ», ԵՊՀ հրատ., 2009, թիվ 1, էջ 74-85:

14. Աղուանից թագաւորութեան պատմութեան որոշ խնդիրների շուրջ: - «Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, Մխիթարեան հրատ., 2009, թիվ 1-12, էջ 137-170:

15. Համամաշեն-Համշենի, համանուն իշխանութեան, Արտաշենի եւ Համշենի այլ բնակավայրերի տեղադրութեան շուրջ: -«Հասկ», Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Սեծի Տանն Կիլիկիոյ, 2009, մայիս, էջ 504-511:

16. Հայ-ափխազական պատերազմները թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջի կիրոպաղատութիւնը: -«Բազմավեպ», Վենետիկ, Ս. Ղազար, 2009, էջ 182-192:

17. Համշենի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում: -«ԲԵՅ», ԵՊՀ հրատ., 2009, թիվ 3, էջ 153-158:

18. Կախեթի իշխանությունը IX դարում և X դարի սկզբին: -«Սերձավոր և Սիջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVII, Եր., 2009, «Էդիթ Պրինտ» հրատ., էջ 14-27:

19. Համամաշեն-Համշենի հիմնադրման ժամանակի շուրջ: -«Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Եր., «Լուսակն», 2009, էջ 218-228:

20. Բագրատունիների տիրույթների ձևավորումը և արքունի տիրույթները Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք: -ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Տարեգիրք», Բ, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 87-105:

21. Կղարջի կյուրոպաղատությունը և Վիրքը Հայ Բագրատունիների տերության կազմում: -Պատմամշակութային ժառանգության մատենաշար, «Հուշարձան տարեգիրք», 2, «Հուշարձան» հրատ., 2010, էջ 209-216:

22. Հայոց Արևելից կողմանց իշխանությունները IX-X դարերում: -«ԲԵՅ», «Հայագիտություն», ԵՊՀ հրատ., 2010, թիվ 132.1, էջ 25-36:

23. Հայոց Սմբատ Ա թագավորի արխագական արշավանքը: -«Լրաբեր (հաս. գիտ.)», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, թիվ 1-2, էջ 119-130:

24. Համշենի հայկական տեղանունները: -«Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Եր., «Լուսակն», 2011, էջ 414-428:

25. Կղարջի և Սամցխեի IX դարի պատմության որոշ խնդիրների շուրջ (ըստ վրացական սրբերի «Վարքեր»-ի): -«ԲԵՅ», «Հայագիտություն», 2011, թիվ 134.1, էջ 3-12:

26. Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջի իշխանների թագադրության հարցի շուրջ: -«ԲԵՅ», «Հայագիտություն», 2011, թիվ 135.1, էջ 16-25:

27. Княжество Амамшен-Амшен в период армянских Багратидов. -“Амшен-Понтос”, выпуск I, Краснодар, 2009, էջ 45-47:

28. О локализации Тамбура-Амамшена-Амшена, Арташена и других поселений Амшенского княжества. -“Амшен-Понтос”, выпуск I, Краснодар, 2009, էջ 40-44:

29. Об истории основания Амамшена-Амшена. -“Амшен-Понтос”, выпуск I, Краснодар, 2009, էջ 37-40:

30. Армянские топонимы вАмамшена-Амшена. -“Амшен-Понтос”, выпуск II, Краснодар, 2009, էջ 94-100:

ЕГИАЗАРЯН АРМАН САМВЕЛОВИЧ

ДЕРЖАВА АРМЯНСКИХ БАГРАТИДОВ
(ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 9-го марта 2012 года в 14⁰⁰, на заседании специализированного совета 004 при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Целью диссертации является исследование исторической географии державы Армянских Багратидов.

Диссертация состоит из вступления, 7 глав, заключения, списка использованных источников, литературы и 6 карт.

Во введении обосновывается актуальность и значимость темы диссертации, ее научная новизна, формулируются цели и задачи исследования, ее теоретическая и практическая значимость, а также дается краткий обзор использованных источников и литературы.

В первой главе диссертации («Образование, границы и территория Державы Армянских Багратидов») показано, что после восстания армян против арабского владычества 774-775гг. началось усиление Багратидов. Князь Армении Ашот Багратид (802-826гг.) смог присоединить к своим владениям земли сошедших с политической арены Армении родов Мамиконянов и Камсараканов, тем самым став самым крупным феодалом не только в Армении, но и во всем Наместничестве Арминия Арабского Халифата.

В период господства Арабского Халифата Багратиды, которые еще в середине VII века владели только гаваром Коговит и частью гавара Багреванд в области Айратат Великой Армении, постепенно усилили свои позиции и начали владеть обширными территориальными, экономическими и человеческими ресурсами.

В первой половине IX века Халифат постепенно ослаб. Этим воспользовались Багратиды, представитель которых - Багарат (826-851гг.), добился статуса князя князей Наместничества Арминии. Усиление Багратидов было временно приостановлено большим походом полководца Халифата Буги в середине IX века. Но процесс восстановления политической независимости Армении, начатый Багаратом, продолжил Ашот Багратид - самый яркий политический деятель Армении и Закавказья второй половины IX века. Сначала он сумел получить статус князя князей Арминии (862 г), а потом распространить свое господство на Закавказские страны (Грузия, Кларджское курапатлатство, Кахетское княжество, Албания (Алуанк или Великое Восточное княжество) и территории племен западной части Главного Кавказского хребта). Но, интересы Багратидов столкнулись с интересами Абхазского царства, и, в результате армяно-абхазских конфликтов 881 и 888 годов, господство Ашота Багратиды признал и Абхазский царь. В 885 году Ашот Багратид получил от Халифа царскую корону. В армянских источниках Ашот I именуется как «Великий».

В период царствования сына Ашота Смбата I, по прозвищу «Вседержитель», держава Багратидов продолжала усиливаться. Армянские войска кроме прочих владений Ашота I подчинили также Армянское княжество Амшен.

Во второй главе диссертации («Наследственные и царские владения армянских Багратидов») исследованы вопросы образования и расширения княжеских владений армянских Багратидов, а также границы и состав их царских владений.

В начале X века владения Багратидов охватывали следующие земли Великой Армении: Айратат, Тайк, княжество Амшен, из области Гугарк гавары Артаан, Джавахк, Куишапор, Болнопор, Цобопор, Колбопор, Дзоропор и Таширк, из Турубера - гавары Мардали, Харк,

Кори, Бзнуник, Алиовит и восточная часть Апахуника, из Васпуракана - гавары Нахиджеван, Голтн, Дарни и Арберани, из Утика - гавары Алуэ и Парисос а из Сюника - гавары Гелакуник, Ернджак и Аревик.

В третьей главе диссертации («Армянские княжества державы Армянских Багратидов») исследованы историко-географические вопросы армянских княжеств Васпуракана, Сюника, Таронских Багратидов, Армянских Восточных областей (Арцах, Утик) и Амшена.

В процессе образования державы Багратидов особенную значимость имели первые три княжества, которые и после создания Державы Багратидов продолжали играть существенную роль в политической жизни страны.

В четвертой главе диссертации («Закавказские царства и княжества державы Армянских Багратидов») показано, что в державу Багратидов входили Кларджское курапалатство, Грузия, Цанарское или Кахетское княжество, Алуанк, княжество Липарита Багваша в Трегке (Триалет), а также территории племен западной части Главного Кавказского хребта.

Князь Албании Амам в 894г. получил царскую корону от Смбага I и был провозглашен «царем Албании». Также Кларджский князь Атрнерсэ в 899г. от Армянского царя получил корону и был провозглашен «царем Грузии», хотя собственно Грузией он не владел.

В 906 году Абхазский царь Константин III выступил против Смбага I, но был разбит. Царь Абхазии был вынужден вновь признать господство Багратидов.

В пятой главе диссертации («Вассальные Армянским Багратидам Арабские эмиратства») исследованы историко-географические вопросы входивших в состав Державы Багратидов арабских эмиратств. Значимыми из них были эмиратства Двина, Партава, Апахуника, Беркри, Карина, Гера (Хойа), Нахиджевана, Гандзак и Тбилиси. Существовали также мелкие эмиратства Хлата, Арцке и Арджеша.

В шестой главе диссертации («Города, крепости и церкви державы Армянских Багратидов») показано, что после восстановления политической независимости Армении были созданы все необходимые условия для развития городов. В период державы Армянских Багратидов в одной только Армении было образовано около 30-и городов и больших поселений. То же самое наблюдается и в вассальных царствах и княжествах. Одновременно развиваются древние города.

В территории державы Армянских Багратидов существовали сотни крепостей, многие из которых находились на границах державы-образовывая тем самым зоны пограничных укреплений. Десятки крепостей находились во внутренних территориях державы.

Исследуемый период также примечателен строительством множества церквей как в самой Армении, так и в Кларджском курапалатстве и Самцхе. В то же самое время развиваются церкви более ранней постройки.

В седьмой главе диссертации («Торговые пути державы Армянских Багратидов») показано, что держава Армянских Багратидов была связана с другими странами Халифата путями, ведущими из Двина, Партава и Тифлиса. Эти дороги связывали Арминию со странами Ближнего востока и через эти страны с Северной Африкой, со странами Персидского залива, с Хорасаном и со Средней Азией.

После восстановления политической независимости Армении и заключения торгового договора с Византией (893 год) открываются дороги, ведущие в Византию, а также дорога через Даряльское ущелье. Держава Багратидов была связана с Византией, с северным Кавказом, Приволжьем, Центральной Россией, Балтией и со странами Скандинавия, Восточной и Центральной Европы.

В Заклчении подводятся главные итоги исследования.

В Приложении приведены 6 карт («Держава Армянских Багратидов», «Княжество Васпуракана», «Княжество Тарона», «Княжества Армянских Восточных областей», «Кларджское курапалатство» и «Торговые пути»).

ARMAN SAMVEL YEGHIAZARYAN

THE POWER OF ARMENIAN BAGRATUNIES
(HISTORICO-GEOGRAPHICAL STUDY)

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on Mart 9, 2012, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4):

SUMMARY

The aim of the dissertation is the research of historical geography of the Power of Armenian Bagratunies.

The dissertation consists of introduction, 7 chapters, conclusion, list of the used sources, literature and 6 maps.

In introduction the urgency and the importance of a theme of the dissertation, its scientific novelty is proved, the purposes and research problems, its theoretical and practical importance are formulated, and also is given the short review of the used sources and the literature.

In the first chapter - “Formation, borders and territory of the Power of Armenian Bagratuni’s” - is shown, that strengthening of the Power of Armenian Bagratunies began in 774-775, after the revolt of the Armenians against the Arabian domination. The prince of Armenia Ashot Bagratuni (802-826) could attach to his possession the lands of Mamikonyans and Kamsarakans principalities which were descended from the political arena of Armenia, thereby becoming the largest feudal lord not only in Armenia, but also in all Viceroyalty of Arminia of the Arabian Caliphate.

Thus, at the time of the Arabian domination Bagratunies, who owned only the area of Kogovit and part of the Bagrevand area in the region of Airarat of the Great Armenia in the middle of VII century, gradually strengthened their positions and started to own extensive territorial, economic and human resources.

Because of the weakening of the Caliphate in the first half of the IX century Bagarat (826-851) the representative of Bagratunies managed to get the status of the prince of princes of Arminia.

Strengthening of Bagratunies was temporarily stopped during the big campaign of Caliphate's commander Bugha in the middle of the IX century. However, the process of restoration of Arminia's political independence started by Bagarat was continued by Ashot Bagratuni - the brightest politician of Armenia and Transcaucasia of the second half of IX century. At first he received the status of the prince of princes of Arminia (862), and afterwards - extended his domination to the Transcaucasian countries of Georgia, Kurapalacity of Kgharjk, Kakhet's principality, Albania (Aghvank or Great Eastern principality) and of tribes of the western part of the Main Caucasian ridge. Because the interests of Bagratunies coincided with the interests of the Abkhazian kingdom, as a result of the Armenian-Abkhazian conflicts of 881 and 888, the domination of Ashot Bagratuni was also recognized by the Abkhazian king. In 885 Ashot Bagratuni received the kingly crown from the Caliph and was proclaimed as “the king of Armenia and Georgia”. In the Armenian sources Ashot I is known as "The Great".

In reign of Smbat I, the son of Ashot, named "Almighty", the Power of Bagratuni continued to amplify. The Armenian armies, along the other possessions of Ashot I, have also subordinated the Armenian principality of Hamshen.

In the second chapter - “The hereditary and the royal domains of Armenian Bagratunies” - are researched not only issues of formation and expansion of domains of Armenian Bagratunies, and also borders and structure of their royal domains.

In the beginning of the X century Bagratunies possessed the following lands of the Great Armenia: regions of Airarat and Taik, Hamshen, areas of Artahan, Dzhevakhk, Kuishapor, Boghnopor, Tsobopor, Koghobopor, Dzoropor and Tashirk from the region of Gugark, areas of Mardaghi, Hark,

Kori, Bznunik, Aghiovit and east part of Apahunik from the region of Turuberan, areas of Nakhidzhevan, Goghtn, Darni and Arberani from region of Vaspurakana, areas of Aghueh and Parisos from the region of Utik, areas of Geghakunik, Erndzhak and Arevik from the region of Siunik.

In the third chapter - "Armenian principalities of the Power of Armenian Bagratunies" - are analyzed historico-geographical issues of Armenian principalities of Vaspurakan, Siunik, Bagratunies of Taron, the East regions of Armenia (Artsakh and Utik) and Hamshen.

The principalities of Vaspurakan, Siunik, Bagratunies of Taron and the Armenian East regions were of special importance not only at the stage of formation of the Armenian Bagratunies Power but also after the establishment of the Power, playing an essential role in its political life.

In the fourth chapter - "The Transcaucasian kingdoms and principalities of the Power of Armenian Bagratunies" - is shown, that the Power of Armenian Bagratunies covered Kuropalacity of Kgharjk, Georgia, Tsanarian or Kakhet's principalities, Aghvank, the principality of Liparit Baghvash and also territories of tribes of the western part of the Main Caucasian ridge.

In 894 Prince of Albania Hamam received a crown from Smbat I and was proclaimed as a "King of Albania". Also in 899, kurapatat of Kgharjk Atrnerseh received a crown from the Armenian king and was proclaimed as "the king of Georgia", although he had not owned Georgia.

In 906 the Abkhazian king Konstantin III opposed Smbat I, but was defeated. The Armenian army occupied the Abkhazian kingdom. The Abkhazian king was compelled to again recognize the domination of Bagratunies.

In the fifth chapter - "Vassal Arabian emirates of Armenian Bagratunies") - historico-geographical issues of Arabian emirates of Armenian Bagratunies are researched.

The Power of Bagratunies included several Arab emirates. The most significant among them were the emirates of Dvin, Partav, Apahunik, Berkri, Karin, Her (Khoj), Nakhidzhevan, Gandzak and Tbilisi. There were also small emirates of Khlat, Artske and Ardzhesh.

In the sixth chapter - "Cities, fortresses and churches of the Power of Armenian Bagratunies" - is enlightened, that after restoration of the political independence of Armenia all necessary conditions for the development of cities were established. During the Power of Armenian Bagratunies about 30 cities and several big settlements were established only in the territory of Armenia. The same development can be seen in vassal kingdoms and principalities. During the same period ancient cities were also developing.

There were hundreds of fortresses in the territory of the Power of Armenian Bagratunies, many of which were on the Power borders, by this establishing boundary zones. Dozens of fortresses were in internal territories of the Power.

The period of this study is also remarkable by building of many churches both in Armenia and in the principalities of Kgharjk and Samtskhe. During the same period churches being constructed earlier were developing.

In the seventh chapter - "Trading roads of the Power of Armenian Bagratunies" - is shown, that the Power of Armenian Bagratunies was connected with the other countries of the Caliphate by the roads from Dvin, Partav and Tbilisi. Through those roads the Power of Armenian Bagratunies was also connected with the countries of the Middle East and through the Middle East with the countries of North Africa, Persian Gulf, Khorasan and Central Asia.

After restoration of political independence of Armenia and the conclusion of the trading contract with Byzantium (893) roads leading to Byzantium and the road leading to the North Caucasus through the gorge of Darial were activated, The Power of Armenian Bagratunies was connected with Byzantium, Northern Caucasus, coastal lands of Volga river, the Central Russia, Baltian lands and countries of Scandinavia, East and Central Europe.

In "Conclusion" the main findings of the research are shown.

In Appendix are presented 6 maps ("The Power of Armenian Bagratunies", "The principality of Vaspurakan", "The principality of Taron", "The principality of Armenian East regions", "The Kuropalacity of Kgharjk" and "Trade roads").